

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՈՍԿԻ ՀՈՐԹԻՆ ԱՌՋԵԻ

Չմեռը արդէն կը ծանրանայ մեր դժբաղը Հայրենիքին վրայ, ու անօթութեան ու տառապանքի աղաղակները հիմակ յուսահատի դողումներով կուզան կը զարնուին Կ. Պոլսոյ Պատրիարքարանին դիմեմ պատերուն, ու կը յամտին, կ'երկարաձգուին, կը յաւերժանան հոն, անպատում ողբի մը, անասելի վայսասունի մը փոխուած:

Պոլսը սակայն, իր ականջները խցած, անտարբեր կ'անցնի անոնց առջեւն, դէպի իր հանդարտ մարտողութեան խաղաղագնաց ճամբաները:

Պոլսոյ հայ թերթերը, որոնց ընթերցումը ֆիզիքական ցաւի մը պէս ընդոտուցիչ կը դառնայ կոր, անդրաձ ու անյողողի՞ օրը օրին արձանագրելու վրայ են այս հրէշային հարց-պատասխանին, ուր արիւն-արցունքոտ ու պատուող Պաղատանքին խելազար գալարումներուն ու կարկառումներուն առջեւ՝ անսասան խուլ-համբուլ թին մը կ'արձանանայ:

Նպասաներու Յանձնաժողով մը կայ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը, որուն արտում գործունէութիւնը կը կայանայ ասդիէն անդիէն ինկած ոգորմութիւնները տաժանքով հաւքելու և զաւաններու կարօտեալներուն նետելու մէջ:

Յանձնաժողովը, գործի ձեռք զարկած ատենը, անսահման ակնկալութիւններու միամտութեանը մէջ, Սընտուկ մը առած քովը զրած էր, որ անշուշտ իր ցաւաղին սենեակը կահաւորելու միայն կը ծառայէ հիմակ, անիմաստ ու ծիծաղելի, որովհետև պարապ է ան միշտ, անօգուտ ու աննպատակ գոյութիւններու անվկանդ ու անյեղի պարապութեամբ մը:

Այդ մարմինը վերջերս զաղափարը ունեցեր է շրջաբերական մը զրկելու Կ. Պոլսոյ բոլոր թաղական խորհուրդներուն որ իրենց եկեղեցիներուն մէջ պնակ պտտցը-

նեն զաւաններու կարօտեալներուն ի նպաստ: Ո՛չ մէկ թաղական խորհուրդ, ո՛չ մէկ, պատասխաներ է այդ հրաւերին:

Ասոր վրայ Յանձնաժողովը աւելի հանճարայեղ զաղափար մը երկներ է. — Պոլսոյ իւրաքանչիւր թաղին մէջ մէկ մէկ զանձապետ կարգել, որոնք, թաղական խորհուրդներուն անտեսած պարտականութիւնը իրենք ստանձնելով, ձեռուընդ մէկ մէկ պնակ՝ կիրակիէ կիրակի պիտի շրջազային եւ հաւաքած զրամին Յանձնաժողովին պիտի զրկեն հետզհետէ:

Բայց մինչև որ Յանձնաժողովը վերջապէս միջոց մը գտնէ Պոլսեցիներուն թմրութիւնը թօթուելու անդին, հայրենի հողին վրայ, անհամար կութիւններ կան որոնք սպասել չեն դիտեր, ու, պէտքէն ձաղկուած, կը պոռան, կը պոռան այնքան որ իրենց ձայնը մինչև Պոլիս կ'արձագանգէ:

Ու ահա կը ծանուցուի թէ Պատրիարքը, վերջապէս, թշուառութեան մեծութեանը հանդէպ, գերազոյս որոշումը սուներ է դիմում մը ընելու Կ. Պոլսոյ ունեւոր Հայերուն:

Կ. Պոլսոյ ունեւոր Հայերը: Տրտմօրէն շահեկան հաշուեցուցակ մը պիտի ըլլար ան որուն մէջ ճշդիւ նշանակուած ըլլար բաժինը այն նիւթական օգնութեան զոր այդ մարդիկը ընձեռեցին իրենց արիւնջուայ ու կիւսմեռ եղբայրներուն ու քոյրերուն:

Ամէնէն զարհուրելի աղէտքին առջեւ որ երբեք զարկած ըլլայ ցեղ մը, այդ մարդոց սառնութիւնը ու այլութիւնը վիթխարի երեւոյթ մը է, որուն առջեւ մարդ կը սահմոկի:

Սուտ է որ այդ մարդիկը փաստուեցան վերջին դէպքերէն, ու հիմակ հազիւ կրնան ծայրը ծայրին բերել: Առեւտրական հրապարակին վրայ ամէնուն զիտցած մէկ իրողութիւնն է որ անոնցմէ շատերը Կ. Պոլսոյ և Մանչէսթըրի մէջ, շարքերէն յետոյ սկսող առեւտրական շարժումին ատեն հազարաւոր սոկիներ շահեցան, — այն սոկիներէն զոր եղեռնի ձեռքեր, ֆիւրտ կամ թիւրք, իրենց զոհերուն հոգեվարքի հոնգիւններուն մէջէն ժողովր էին,

և որոնց վրայ արինի արատները դեռ կը մնային։ Ու այդ ղեկին վրայ անդորր հոգիով մը նստան անոնք, շնագայլի յղիացումով։

Կը տարակուսիմ՝ թէ այդ Հայերը, քրանելով, տքալով, հեւալով, հոգինին բերանին եկած, հազիւ հազ 10,000 ոսկի մը տուած ըլլան հաւաքաբար Հայաստանի թշուառներուն ի նպաստ։ Ու իրենցմէ մէկը միայն — ինչպէս կը զուրցեն իր արբանեակները հառաչող շարակնութեամբ մը — այդ 10,000 ոսկին մէկէն շահեցաւ շարդերուն շնորհիւ։

Եթէ միայն մէկը գտնուէր իրենցմէ որ զրամապէս զոհողութիւն մը, իրացնէ զոհողութիւն մը ընէր իր ջախջախուած Հայրենիքին համար, իբր Հայ պիտի միութարուէինք, իրենց ահաւոր հոգիին աղջամուղջքին խորը ընդհանրելով ազնիւ կարելիութիւններու հեռաւոր բայց զոյ նշոյլ մը։ Բայց մեզի շտրուեցաւ տեսնել, միակ անգամ մը գոնէ, այդ զովացնող ու անդորրող շարժումը մարդուն որ՝ լիալիր՝ իրեններուն կը նետէ — ո՛չ անշուշտ իր ամբողջ ունեցածը, ատիկա կ'երևայ թէ մեր ցեղին մատչումներէն գեր ի վեր բան մըն է — բայց այնքան որքան պէտք է զոհողութիւն մը ըրած ըլլալու, այդ զոհողութեամբը նեղուելու համար։

Ամենքն ալ, հազար թախանձանքէ ետքը որոնք իրենց քարացած կաշիէն չէին կրնար ներս թափանցել սակայն, ճղճիմ գումարներ նետեցին երկնցող ձեռքերուն մէջ, անհարկի մուրացկան մը տէֆ ընելու փութկոտութեամբ, ու ա՛լ իրենց հաշիւը փակուած նկատեցին իրենց և իրենց ցեղին միջեւ, մինչդեռ անգին, Ամերիկայի գործարաններուն մէջ առտուրնէ մինչև իրիկուն իրենց կեանքը քաշկրտող հայ բանուորներ արին—քրտինքով վառտկած զրամին իրենց բերնէն կտրելով հոյակապ առատաձեռնութեամբ մը նպաստի յանձնաժողովներուն կը զրկէին շարունակ։

Դիւային երևոյթ մըն է ասիկա, որուն առջև ա՛լ մը տաժումը կը դադրի, յուսահատութեան, ընկճումի, անէացումի պարապութեանը մէջ։

Բոլոր այդ հարուստները, — հին խօսք մը կրկնելով որ իրենց համար ըսուած է կարծես յատկապէս — զրամապանակ մը ունին իրենց սրտին տեղ, այդ զրամապանակին պէս աղտոտ ու ճմռթկած հոգիով մը։

Կ'երևայ թէ ազատում չկայ ատկից. ճակատագրական խօթութեան մը պէս որ անյրիպելի կերպով պիտի հասնի իր որոշուած շրջանին, Դրամին տիրացումը Հայուն մէջ առաջ կը բերէ արեան տարբազարութիւն մը, որ զինքը մէկէն կ'անջատէ ցեղին հետ համբարշտութեան ամէն բերումէ։ Մամոնային տիրապետութեան տակ ինկած Հայը նոր էակ մըն է որ — գէշ կնկան մը զարնուած մարդու մը պէս որ տունը—տեղը, ընտանիքը ու հայրենիքը կը թողու՝ անոր ետեւէն երթալու համար — անոր երկրպագութենէն դուրս ուրիշ գաւառներ չի ճանչնար, ու անոր ամուլ վայելումէն դուրս՝ ուրիշ հրճուանք։

Դրամը ամէն բան կը շորցնէ անոր մէջ, իր յառաջ բերած ցամքած ամայութեան վրայ ուրիշ ո եւ է զգացման տեղ չթողլով՝ բայց եթէ անոր միահեծան, այլամերժ ու բոնաւոր հրայրքը։



Մնաց որ, ինչո՞ւ ձանձրութիւնը յանձն առնեն, ճիգ թափեն արժանի ըլլալու համար իրենց ազգին կողմէ յարգանքի ու համակրութեան, անոր օգնութեան հասնելով իր ճգնաժամի օրերուն։ Քանի որ իրենք իրենց ցեղէն դուրս կը նկատեն, պէտք էր որ, արժանապատուութեան տարրական ըմբռնումով մը, ազգն ալ իր քամահրանքին տակ ճզմէր այդ բոլոր մարդիկը։ Եւ սակայն եկեղեցականները անոնց կը վերապահեն իրենց ամէնէն իւղաթուրմ ու շողով օրհնութիւնները, աշխարհականները՝ իրենց ամէնէն կորագամակ խնարհութիւնները ու հաւան ժպիտները, խմբագիրները՝ իրենց ամէնէն պահեստի դրուատիքները ու հատընտիր զովաբանութիւնները։

Ամենքն ալ իրար կ'արժեն։

Ստուգօրէն չեմ գիտեր Կ.Պոլսոյ առօրեայ ընկերական արդի կեանքը, բայց բնաւ տարակոյս չունիմ որ այն հասարակ գոյը, այն գոհիկ խաբբան որ Գրիգոր Գարակէօզեան կը կոչուի, նորէն ամենուրեք, Պատրիարքարանը թէ թաղական խորհրդարանները, զուրտը թէ սրահներու մէջ, ամենուր ամէնէն յարգալիր բարեւները կը վայելէ ու ամէնէն սիրազեղ ընդունելութիւնը, ճիշդ որպէս թէ փոխանակ ազգին որբերուն բերնին հացը խլած ըլլալու, բաղդատաբար աննշան զոհողութիւնը ըրած ըլլար իր հարստութենէն մաս մը անոնց բարեկեցութեանը նուիրած ըլլալու։

Յաճ, անարգ, ստրուկ հոգիով մարդերու բազմութիւն մըն է ասիկա որ իրար կը բռնեն։

Կ. Պոլսոյ բոլոր թերթերն ալ բնական իրողութեան մը պէս կը պատմէին վերջերս հետեւեալ դէպքը։

Երուսաղէմի միաբանութիւնը զիստոր տպագրիչը ըլլալով հայ եղեղեցական գրքերու, Կ. Պոլսոյ Պատրիարքարանին Նպաստի Յանձնաժողովը խնդրած էր անկից որ բարեհաճի այդ գրքերէն մաս մը մատակարարել գաւառներու այն եկեղեցիներուն ուր, բարբարոսներու ձեռքով աւերուած մերկ պատերու մէջտեղ, հաւատացող հոգիներ այժմ կը համարձակին նորէն քով քովի դալ սրտեռանդն՝ հաւատքին մխիթարութիւնը վայելելու համար իրենց ամենօրեայ մարտիրոսութեանը մէջ, և իրենց ազօթքներովը ողորջելու Ան որ իրենցմէ երես դարձուցած ըլլալ կը թուի։ Նպաստի Յանձնաժողովը յանդգնած էր պաշտել Երուսաղէմի Պատրիարքին որ զիջանի զեղչ մը ընելու այդ գրքերուն արժէքին վրայ։

Երուսաղէմի Միաբանութիւնը լսած է այդ աղբբոսին, ու հաւանած... հարիւրին քսան զեղչ մը ընելու, — ինչ որ ամէն խանութպանի ուղիորական զեղչն է, ընդունուած

բան մը՝ որուն համար ո՛չ աղերսանքի պէտք կայ և ո՛չ զգացումներու կոչում ընելու:

Հիմակ կը ծանուցուի թէ Յանձնաժողովը, իր արդէն ձեռք բերած արդիւնքին վրայ հպարտ, նոր դիմում ժը ըրած է Երուսաղէմի Պատրիարքին, երեսանկեալ հայցելով որ փոխանակ քսանի՝ քսասուն առ հարիւր զեղչ մը ընդունի, եթէ սակայն կարելի է:

Երուսաղէմի պատրիարքին պատասխանը զեռ հրապարակուած չէ, բայց բնաւ չպիտի զարմանամ եթէ մէկ քանի օրէն Պուլոյ թերթերուն մէջ կարդանք թէ «Երուսաղէմի Ամենապատիւ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրը» սակարկութիւնը ընդունել և տարապայման զոհողութիւնը ըրեր է հարիւրին երեսուն զեղչի մը հաւանելու այդ զրքերուն վրայ: Եատերը բնական զէպքի մը պէս պիտի արձանագրեն իրողութիւնը, մինչ ուրիշներ պիտի զանուխն որ անոր պիտի կցեն իրենց հիացումը այն անսահման հողածութեան համար որով Երուսաղէմի պատրիարքը իր հօտին հողերական պէտքերը կայն կայն:

Ոչ ոք պահ մը սարսափած մնացած է այն հոգեկան տրամադրութեան առջեւ որ Հայ Եկեղեցիին գլուխներէն մին կը մզէ ստորին խանութպանի մը պէս սակարկութեան մտնելու իր հօտին հետ, անոր տալու համար հաւատքին սփոփանքը: Ոչ ոք կը թուի մտքէն անցընել թէ Երուսաղէմի միաբանութեան համար վերջապէս անհնարին զոհողութիւն մը չէր իր ցրտան անկիւնը դիզուած զրքերը զրկել անոնց որոնք պէտք ունին, ու ասիկա առանց ո՛րէն քիփախնութեան: Ա՛յ ոչ ոք անոնցմէ կը սպասէ երթալ սրբել արցունքները եւ կապել վերքերը մեր ինկած եղբայրներուն ու՛ քոյրերուն: Բայց գոնէ այոքան տարական ծառայութիւն մը իրենց հօտին մատուցանելու մարդկութիւնը սնենային:

Խեղճ Արսէն վարդապետ Թօխմախեանը— զոր հայրենասերի ու յեղափոխականի անունին տակ ապաստանած հասարակ ոճրագործներ փողոտեցին եղբայրասպան զաշոյնով մը— կը պատմէր թէ այդ Յարութիւն պատրիարքը, Էրզրում, եկեղեցիին բեմէն քարոզած ատեն, Աստուծոյ, Յիսուսի և ուրիշ անունները կը յիշէր իր Թոփին վրայ բազմած, բայց մէկէն ի մէկ, անգիտակից, բնազգական ոտուժումով մը տեղէն կը շարժէր ու ոտքի կ'ելլէր երբոր խօսքին ընթացքին մէջ առիթ սնենար գոչելու:

— Ոսկի և արծաթ:

Ու, մտքէն, կը խաչակնքուէր անշուշտ:

Ոսկի Հորթին առջեւ նոյն չորեքթաթ երկրպագութիւնն է հիմակ ալ, ու եկեղեցական զրքերու հայթայթման այս յատկանշանական պատմութիւնը պակուցիչ լոյս մը կը սփռէ այդ մարդոց հոգիներուն մզձաւանջային զարշուժեանք վրայ:

Ու ինչ պատկերալից ու ազգական խորհրդանշան մըն է տեսնել այդ կարգի եկեղեցականներուն լիառատ

օրհնութիւնները ու սրտաբուլի մաղթանքները՝ իրենց հոգեկցորդ ունեւոր Հայերուն համար, յանուն կրօնքի մը որ սիրոյ և վթուժեան վրայ հիմնուած է:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

Ա Գ Ռ Ա Ի Ն Ե Ր Ը

Սև անտառին անթափանց ու անվախճան Գիշերին մէջ կ'ապրին անոնք իրենց սև կեանքը:

Յղիացումին ու հանգստեան անշարժութիւնն է հիմա, ու իրենց արիւնով բեռնաւորուած խղճմանքներուն տաժանազին մարտողութիւնը կը հեւայ անտառին սև լուսութեանը մէջ:

Երբեմն, նենգաւոր խաւարին ներսը, կը բարձրանայ, կը լեռնանայ ազոսներուն միահամուռ կոխչը,— աղօթքը անոնց ու աղաղակը իրենց անյազ տենչանքներուն վաղանցուկ զոհացումին:

— Յաւատեանական Ոճիբին սև պատարագն է ասիկա:

Ու ա՛լ ձայները կը հասնին, թեւերը կ'իյնան ծանրագանգաղ անէացումի անշարժութեան մը մէջ, աչքերը կը գոցուին գինով յոգնութեան մը հեշտալի մոռացումովը, ու ազոսները կը քնանան վաղնջական ծառերուն ուրուականային խանամառնումին թառած:

Բայց, պահ մը վերջը, քունին մթութեանը մէջ անզամ մըն ալ սեցած ազոսներուն յանկարծական վիթխարի սթափումը կը փոթորիկէ անտառը: Անոնց վայրագ բիբերը ահեղօրէն կը բացուին, կը սևեռին ու զիշերը կը բզբտեն մուկին նայուածքներով:

— Արիւնին հոսն է որ հեռուններէն, ցաւատանջ ու անտրունջ հեռուններէն կը հասնի իրենց...

Ու այսահար խուժումով մը կը սուրան հիմա, սև անտառէն դուրս, նախճիրին հրաւերէն խենդեցած ազոսները:

* * *

Այս շարաշուքօրէն խորհրդանշանական պատկերը կը յաճախէր զիս երբեմն, ու անոր մէջէն է որ կը տեսնէի մեր ալ աշուանները,— մեր հայր սարքներուն, վարդապետներուն, սրբազաններուն, պատուելիներուն, տէր պապներուն սեւ ջուրը:

Բայց կեղծիքի ու Ստուրթեան տաճար՝ սև անտառին միստիքական աղձամուղչին դուրս, իրենց պիղծ

գործունէութեան զաշտերուն մէջ ալ տրուեցաւ ինձի տեսնալ զանոնք:

Հայ Տառապանքին կարմիր ճամբաներուն մէջ հանդիպեցայ անոնց: Օ՛ արիւնի ու աւարի անկշտութիւնը մեր ազուններուն: Դեռ չպաղած զիսկներու վրայ ծոեր էին, ու կիսամեռ վիրաւորներու յամառող կեանքը՝ անոնց զեռ առք վերքերուն մէջէն կը խմէին...:

Անշուշտ, հեղեղօրէն թափուած մեր արիւնին համար օտար ազուններուն ախորժքը զիտէի, — մեր ահարկու թշուառութեան առջեւ օտար կրօնաւորներու շահանդիւր կարեկցութեան ու շահաբեր զթութեան ցած իրարանցումը տեսեր, լսեր էի: Բայց չէի ուզեր, չէի կրցեր հատալ թէ հայ ազունները, հայ կրօնաւորները՝ մեր նահատակութիւնը շահագործելու քստմնելի գործին մէջ՝ իրենց օտարազգի եղբայրակիցներուն հետ մրցելու հրէշութեան պիտի հասնէին:

Պատրանքը դժնդակ եղաւ:



Սճի աշնան կը, հայկական յաւաստութեան առթիւ միթիւններու ու բանախօսութիւններու այն աղմուկալից շրջանին, ուր Անդլիոյ անհամար կրօնական ազաններու ներկայացուցիչները, տարապայման խանդավառութեամբ մը, աճապարեցին մեղքնալ մեզի ու աճուրդի հանել մեր խեղճութիւնը իրենց քրիստոնէական զթութեան խանութներուն մէջ:

Ժողովարանի մը դուռը կախուած ազգարարութեան մը վրայ կարդացեր էի թէ հայ պատուելի մը պիտի քարոզէր հոն, յաջորդ շաբթուն:

Օտար պատուելիներու մեր տաժանքին շուրջը աճին օր փսխած տխմար ու վարնոց անբանութիւններէն զայրացած, հետաքրքիր եղայ տեսնալու այդ Հայը որ զովացնող միւթարանքը պիտի տար ինձի անշուշտ, խօսելով մեր Յաւին վրայ, զայն իր միտին մէջէն իսկ ըզգացողի, Հայու զիտցող ու սարսուղին հոգիով մը:

Որոշուած օրը, կանուխէն, ժողովարանը գացի:

Լոնտոնի ազնուական թաղերէն մէկուն մէջ էր, ու հոտ հաւաքուած հասարակութիւնը կը բաղկանար մեծ մասամբ ձեռքովեացներու ու յետիւններու ընտրուած բազմութենէ մը:

Արարողութիւնը, սովորական, անհամ ու որտնեղիչ, բողոքական ծէսերու զերգանց անվեհափառութեամբը, կէս ժամէ ի վեր կը տեսէր, ու ես անհամբեր կը սպասէի հայ պատուելին, հետզհետէ սաստկացող հետաքրքրութեամբ մը:

Վերջապէս երգեհանը մարեցաւ, սաղմոսերգութիւնները լռեցին, ու ծնրադիր, աչքերնին գոց, յանկարծաբանուած աղօթքի մը մէջ խոնարհելէ վերջ՝ զլուխները վեր բարձրացան, ու նայուածքները զկպի բեմ դարձան:

Տեղւոյն երէցն էր որ ձեռքի հանդիսաւոր շարժումներով ու կարեւոր ձայնով մը հայ պատուելին կը ներկայացնէր իր հօտին: Ջերմեանդ ներքող մըն էր աս

պատուելին Հայաստանի գաւառներուն մէջ ունեցած մարդորսի բեղմնաւոր գործունէութեանը:

— Առաքեալ մըն է այս Հայը, կը պոտար երէցը. հարիւրաւոր կորսուած հոգիներ փրկած է ան ու Տերօշը փարախը դարձուցած է զանոնք...: Երկիւղածութեամբ մտիկ ընենք զինքը:

Ու երէցը անասնաբար մաղթելէ վերջ՝ որ օր մը բոլոր Հայերս ալ պատուելին ձայնը լսենք ու Տէրը զտնանք, հրաւիրեց զանի որ բեմին վրայ յառաջանայ ու սկսի իր քարոզը:

Սահմուկած նայեցայ իրեն: Հայ պատուելի մը այս մարդը:

Արեւելի հովարտայի խայտարղէտ տարագով, թրքական Ֆէս մը զլսուն վրայ, թուխ ու ժանտաղէմ մարդ մըն էր ան, որուն շաւլարին լայնածաւալ աշխարհականութիւնը ու կնթարիին ոսկեպանոյճ զուարթութիւնը տարօրինակաւ կը հայհոյէին իմ մտքիս մէջ՝ զարնուած ազգի մը հոգեվարքին ընկճող Սուրբ խորհրդանշանող ու զայն օտարներու առջեւ վիթխարի բողոքի մը պէս ուսերուն վրայ պտտցնող, անոր նուիրական բեռանը տակ ծոած կրօնաւորի մը սխրալի յղացումիս զէմ:

Ու կը հասկնայի հիմա որ պատուելին ընտրած էր այդ տարազը շլմորելու համար օտարները — անկեղծօրէն միմիայն ձեռաքրքիր — ու ինքզինքին տալու համար տարաշխարհիկ շահեկանութեան մը ապահովիչ վաւերականութիւնը:

Բայց պատուելին խայտառակ երևոյթը, մէկէն, հըրաշալիօրէն ներգաշնակուեցաւ աչքիս առջեւ անոր տրդմուտ հոգիին գարշահոտ ազեղութեանը հետ, երբ ան սկսաւ մեր ցեղին ու կրօնքին վրայ խօսիլ:

— Օ՛հ, ամենքն ալ քրիստոնեայ չեն, կ'ըսէր, ձայնի յափշտակուած երկարութեամբով ու աչքերը կէս մը զոցելով:

— Բայց պէտք է ըլլան, կը փութար աւելցնել, յաղթական, հրեշտակային դժնդակ ժպիտի մը մէջ զէմքը երանացած:

Ու Հայաստանի գաւառներուն մէջ իր մարդորսի առաքելութեան իրադարձութիւնները կը պատմէր, անարգ խանդավառումով մը որուն մէջ կը հաղորդուէին՝ հոտ ներկայ՝ բողոքական մոլեռանդութեան մէջ ցամքած խղճմտանքները:

— Օ՛հ, տեսնելու բան էր, կը շարունակէր պատուելին, բոլոր այն տեղերը զորս մշակեցինք կնոջս հետ: Երբ իր կորսուած ոչխարները: Նախ չէին հասկնար մեզի ու կը կասկածէին մենէ: Երբեմն ատելութեամբ լեցուն աչքերով կը նայէին մեզի ու պատահեցաւ որ լուտանքներ պոտան մեր երեսին: Բայց մենք կը ժպտէինք իրենց ու անուշ խօսքեր կ'ընէինք միշտ անոնց: Շատերը, օրերով անօթի մնացած, զեփ զեղին զմեքերով ու կմախացած մարմիններով կը հանդիպէին մեզի: Տերօշը խօսքը կ'ընէինք անմիջապէս, ու անոնց տեսնալաւ աչքերը կը ճառագայթէին Տերօշը խոստացած հացին

ու վայելքներուն ի լուրս Բիշ ատենէն հրաշքներ զոր-
ծուեցան այդ գոթաղոց եզրայրներուն խաւար ներսիդին։
Տէրը յայտնուեցաւ անոնց, ու խումբ խումբ կը դիմէին
մեզի ու կը միխթարուէին Տէրոջը անունով...։

Սուին չոփ չոր ու ամայի դաշտերուն մէջ հոնդա-
լէն բաշխուող մահասարսուտ ու խելացնոր էակնե-
րու առջեւ մէյ մէկ կտոր հաց նետեր էր, ու պահան-
ջեր էր անանցմէ սր չբացուիլ յամառող ակոսներնուն
մէջ պատառ մը կեանք խածնելէ առաջ՝ ուրանան իրենց
պարաւոր եկեղեցին։

Ու անձնուրացութեան զմայլելի շեշտով մը կ'ա-
ւելցնուր։

— Իրա՛ւ, շատ բան բաշխցինք, ես ու կինս,
բայց մեր ձեռք բերած արդիւնքին առջեւ մեր հոգիին
երանութիւնը ամէն զրկանք ու նեղութիւն կը մոռցը-
նէր մեզի, ու միշտ ինքզինքնիս Տէրոջը աւելի մօտ
կը զգայինք։

Բերանաբաց ու երկիւղած հիացումի մը մէջ քա-
րացած մտիկ կ'ընէին ամենքը։

Պատուելին, հետզհետէ բորբոքող եռանդով մը կը
շարունակէր իր քարոզը, հինգ վայրկեանը անդամ մը
մոռցուած կարեւոր բան մը յիշելու սթափումով ու զայն
իր ուկնդիրներուն հաղորդելու փութկոտութեամբ մը
կրկնելով։

— Օհ, չէ, ամենքն ալ բրիստոնեայ չեն...։

Ու անմիջապէս՝

— Բայց պէտք է ըլլան, կ'աւելցնէր, ապագայ աւե-
լի արգաւանդ խաչակրութիւն մը ուխտելու հոյակապ ըս-
պանալիքովը։

Բայց պատուելին այն ատեն իր խաղբութեան ծայ-
րակէտին հասաւ, երբ գաղափար մը տալու համար հայ
կրօնական երաժշտութեան ու լեզուին վրայ՝ բողոքական
սաղմոսներ սկսաւ երչել... տաճկերէն լեզուով...։

Քստմեղի վայրկեան մը եղաւ ասիկա ինծի համար։
Բաւական չէր այդ Հայուն, բարեկենդանի այդ ամպա-
րիշտ ծպտումին մէջ, գալ իր ցեղին վիրաւոր հոգին պղղ-
ծել՝ անբանացած ու անտարբեր քաղքենիներու գոեհիկ
հետաքրքրութիւնը վրայցնելու համար, այլ պէտք էր որ
չնական քաջութիւնն ալ ունենար ան մեր լեզուն սպան-
նելու։

Վերջէն իմացայ որ Մարաշցի մըն էր պատուելին
ու հայերէն չէր գիտեր։ Լոնտոն առած էր իր կրօնական
կրթութիւնը ու հոն ամուսնացած անգլուհիի մը հետ։ Ա-
տեն մը կիլիկիոյ կողմերը մարդորսութեամբ գբաղել վերջ,
հայկական ջարդերուն ցաւագին այժմէութենէն օգտուելով
Անգլիա եկած էր նորէն, ու արհեստ ըրած էր իրեն քաղ-
քէ քաղաք պտտելով ամէն աեղ քարոզներ խօսիլ, ու հայ
որբեր պահելու պատրուակով կրցեր ալ էր հազարաւոր
ոսկիներ զիգել։

Հիմա ա՛յ ծանօթ ու յարգուած անուն մըն էր Անգ-
լիոյ մէջ, Վարպետ խաչագող մը, զիտցեր էր ամե-
նուն հարկադրել ինքզինքը, ու ակնածանքով մօտեցեր

էին իրեն բոլոր անոնք սրոնց զբաւը շորթած էր մեր
սովածներուն ու ինկածներուն անունով։

Իրիկուն մը պատուելին Մարաշցի անգլիաբնակ մե-
ծահարուստ վաճառականի մը տունը, առատ ընթրիքի
մը երջանիկ մարտդութեանը մէջ անառակցած, սա
պզտիկ նշանակալից պատմութիւնը ըրեր էր իմ մէկ
բարեկամիս։

— Անցածները շնորհքով անգլիացի ձեւերէն մը ին-
ծի դիմեր էր տասը ոսկիի շնչին գումար մը յանձնե-
լու, Հայաստանի որբերուն համար։ Մարդուկը զբաւը
սեղանիս վրայ գնելէն վերջ, երկչոտ ձեւով մը հարցուց
ինծի թէ ի՞նչ միջոցներով կարող կ'ըլլայի կոր ժող-
ւած զբաւներս Հայաստան զրկել եւ թէ հոն ի՞նչպէս կը
բաժնուէին կոր այդ զբաւները։

« Դեռ խօսքը չէր ըմբուցած երբ զինքը ընդմիջեցի
և տասը ոսկին առջին քշելով, ըսի իրեն։

— Պարո՛ն, ձեզի հաշիւ տալու պէտք չեմ զգար...։

« Այս խօսքիս, մարդը տակնուվրայ եղաւ, կարմրե-
ցաւ, դեղնեցաւ, ու հազար ներդրութիւն խնդրելով պա-
ղատեցաւ որ տասը ոսկին ընդունիմ։ Ու զբաւը ետ
առնելու համար կրկին անգամ շնորհակալ ըլլալէ ետք,
ելաւ գնաց ամօթահար...։»

— Ասիկա ինծի ըսած ատեն, կ'աւելցնէր բարե-
կամս, պատուելին կը խնդար, կը խնդար, մեծամխոր ու
երջանիկ խնդրելով մը որ տունը կը թնդացնէր։



Օր մը սակայն փորձուեցայ ներել պատուելիին որ-
բիթէ նախընտրեցի իր վատութիւնը, երբ միևնոյն պա-
րագաններուն մէջ հայ վարդապետի մը հանդիպեցայ։

Առաջինը գոնէ, անկեղծ միջակութիւններու ու պըտ-
ղած գիտակցութիւններու այդ տափակ միջավայրին մէջ,
կը յաշոդէր գերազանց մտայնութեան մը տպաւորու-
թիւնը ձգել, ու ատով կը փրկէր գոնէ խելացի ցեղի մեր
թանկագին համբաւը։

Հայր սուրբը, ընդհակառակը, իր խափանիչ անձին
լայնածաւալ անճոռնիութեամբը ու իր բացակայ ուղե-
ղին ցնորատու պարագովը արհամարհանք ու ծիծաղ մի-
այն կ'ազդէր իր ողորմելի ուկնդիրներուն, ու մեզի տա-
մանագինօրէն արգահատելի ընել նկրտած ատեն՝ ծի-
ծաղելի ընելու միայն կը հասնէր։

Պատուելին մաքուր անգլիերէն մը խօսելու կարևոր
առաւելութիւնն ալ ունէր։ Հայր սուրբը անորակելի ու
անմեկնելի լեզու մը կը թոթովէր որ ամէն բան կրնար
ըլլալ, բացի անգլիերէնէ։

Աշխարհական միթիսիկի մը մէջ տեսայ զինքը ա-
ռաջին անգամ։

Մտղկանկար կարմիր պասմայէ իւզոտ շուրջաւոր
մը ծածկուած, զլսուն վրայ խաւաքարտէ եպիսկոպոսա-
կան գունաւոր շաթալ-թագ մը, աջ ձեռքը տաշուած

ու ներկուած փայտէ գաւազան մը՝ բեմին վրայ նստած էր լուս, բանախօսներուն կարգին մէջ կղզիացած իր գոյնզգոյն խեղկատակութեամբը:

Սրահին մէջ երկօեռ բազմութիւն մը լեցուած էր, ու ամէն կողմէ զարմացումի ու հեգնութեան քրքիջներ կը լսուէին:

— Հայ եպիսկոպոսը ... Հայ եպիսկոպոսը, կ'ըսէին իրարու, հայր սուրբը ցուցնելով, ու բոլոր աչքերը աւոր վրայ կը յառէին:

Անբեւեակայնիօրէն այլանդակ տեսարան մըն էր աս: Բեմին վրայ հայր սուրբին պոռոտ, աղքատ ու անշընորհք զգեստաւորումը՝ անթերի սև որտէկնութիւնը մէջ սեղմուած ձեւերը ներուն շարքէն ծաղրփնկարային խօլ համեմատութիւններ կ'անէր:

Հայր սուրբը, զգալապէս անհանգիստ իր պատարագորի ճնշող հանդերձանքին մէջ, մէկ ձեռքը ծունկին, միւսով գաւազանին կոթնած, ուսերը կ'երեւցնէր երբեմն ու ամօթին վրայ կը տեղաւորուէր շարունակ՝ վար չսահելու քրքնամօր զգուշաւորութեամբ մը:

Երբ խօսելու կարգը իրեն եկաւ, հայր սուրբը բուն ոստումով մը ցատքեց տեղէն ու բեմին վրայ քանի մը քայլ խոյանալով վայրենիի անհասկնալի աղաղակ մը արձակեց:

Բոլոր սրահը սահմուկած կը նայէր: Ոչ ոք բան մը հասկցած էր:

Հայր սուրբը աչքերը գետինը սևեռած լոնց վայրկեան մը: Յետոյ երկրորդ աւելի ուժղին աղաղակ մը թոցուց ու սկսաւ բեմին վրայ անապարեղ աջ ու ձախ:

Շուարումով ու սեղմուած խնդուքի կուտակումներով յղի լուծիւն մը հայր սուրբին առջեւ կը բացուէր անզունգի մը պէս ուր գահաւիժելու վտանգէն կարծես խելայեղ, դիւային նայուածքներ զտրելով չորսդին, կը պոռար, կը պոռար ան հիմա գաւազանի սպանալից ճօճումներով ու շուրջառին վրայ բունցեցի կատաղի հարուածներ իջնալով:

Ու հայր սուրբին լուսնոտ պոռչտուքին մէջ կցկտուր բառեր, թունաւոր ճահիճ մը ինկած զինով թռչուններու պէս, կը խեղզուէին յուսահատ մաքառումներով:

— Ջարդ... ջարդ... մահմետական... սպաննել... քրիստոնեայ... սրբ... պղծել... առևանգում... հրդեհ... ասոր... արին... անթի...

Ասիկա քոռորդ մը տեսց: Հիմակ ոչ ոք կը խընդար շուրջս: Վախի ու անձկութեան արտայայտութիւն մը առեր կին բոլոր դէմքերը: Ու ինձի թուեցաւ թէ հայր սուրբին ակամայ տաժանելի զառանցանքը ճեղքելով, իրենց գլխուն իջնող՝ հեռաւոր գուշակուած արհաւիրքներու բուն յաճախանքն էր աս որ կ'ամպուտէր իրենց անշարժ հոգիներուն լճացած խաղաղութիւնը:

Թանկարժ ապշանքի ու տժգահութեան շարժում մը յեղաշրջեց սրահը:

Հայր սուրբը բեմին վրայ կը հանուէր: Նախ շարժառը հանեց ու զայն յաղթական դրօշակի մը պէս պարզելով անորոշ բառեր մուտաց:

Հակի մը պէս պարզելով անորոշ բառեր մուտաց:

Կ'երևի թէ հայ եկեղեցական նախորաններուն անունը իր աջգլխացի ունկնդիրներուն սորվեցնելու վիժխարի գաղափարը ունեցեր էր մէկէն հայր սուրբը, տեսնելով որ ալ բան մը չունէր ըսելիք:

Դէմքերը կը խոժուէին, ձայները կը բարձրանային:

Հայր սուրբը կը շարունակէր հանուել, հրէշային պաղարինութեամբ մը: Մէկիկ մէկիկ, խանդաղատազին խնամքով մը կը ցուցնէր իր սրբազան ողբալիքը: — ամբողջ կազմածքը իր տիւր արհեստին — անհարին բառեր արտասանելով միշտ:

Երբ փորուարին կապիչները սկսաւ քակել, ալ խայտառակութիւնը իր լրումին հասած էր: Ապշած ու զայթակղած ճէմքներ կը պոռային ամէն կողմէ:

— Ամօթ է ... ամօթ է ... տիկիներուն առջեւ չըլլա՛ր ... ամօթ է ...

Բայց հայր սուրբը, անվկանդ այս անիմաստ աղմուկին առջեւ, հանդարտօրէն կը հանէր փորուարը, առանց շատ անապարելու: Ու պահ մը վերջը, զիշերազգեստի նմանող երկայն ճերմակ շապիկի մը մէջ բոլոր հասակովը կեցած, իր թանձր գլխուն թաւարժի սևութիւնը շապիկին ճերմակութեանը վրայ շեշտուած, դեռ կը յամառէր հոտ ցուցնելու իր վերջին կապիչներուն ու կոճակներուն իւրաքանչիւր մասերը:

Գերագոյն, անյղանալի, բանդագուշային կատակերգութեամբ տեսարան մըն էր աս, որուն առջեւ Անգլիացի ծնած ըլլալու էր խնդուքն՝ ու Հայ՝ ամօթէն շխորտակուելու համար:

Չսպուած նեղութիւն մը բացորոշ կը կարգացուէր հայր սուրբին շուրջը զանուող անձերէն՝ դէմքին վրայ: Անհանգուրձելի դրացնութիւն մըն էր ասիկա, ու հայր սուրբին թեւէն բանելով զայն սրահին դռնէն դուրս հրելու փափաքին բացակայութիւնը չէր որ վար կ'անէր բաւոր այդ օտար հայասերներուն նայուածքները: Բայց վերջապէս այդ անտանելի մարդը ճղակտոր ելած ազգի մը անսահման տառապանքը կը ներկայացնէր հոտ, ու այս նկատումը յայտնապէս կը ստիպէր զիրենց համակերպիլ կրելու հայր սուրբին զանգուածեղ արտառոցութիւնը:

Սրահին մէջ պնակ մը կը պտըտէր հիմա ուր ողորմութիւններ կը լեցուէին ... Հայաստանի կարօտներուն համար:

Քանի մը օր վերջը, մշուշոտ իրիկուն մը, Երուսղըն բորտի մայրութիւնը վրայ, ուր ցնծուէին իրենց յոգնած ու վրդովիչ միսը կը փտացնեն, ցուրտին ու անձրևին մէջէն յուսալով, վաղորդային հացը կամ իրիկուան հուսիքին ապահովող նախախնամական անցորդին, լապտերի մը դեղին լոյսին տակ հայր սուրբը ճանչցայ որ անհանդարտ փութկոտ կերպարանքով մը կը խօսեր երիտասարդ պոռնիկ աղջկան մը հետ:

Անակնակը իր ուսմիկ գոյթակղականութեամբը չէր անշուշտ որ զիս կը ցնցէր, բայց ակաւայ կանգ առի, տասնեակ մը բայլ անդին, ու լուսաւոր ցուցափեղկ մը դիտելու ձեռով հետեւեցայ պահ մը հայր սուրբին ա՛նձապարանքի ու անհամբերութեան զահալէ՛մ շարժում ներուն:

Յանկարծ երիտասարդ ցնծուհին, փնտրանքի ու կատաղութեան թափով մը ետ հրեց իր արժանապատիւ խօսակիցը, անոր երեսն ի վեր պոռալով՝

— Հինգ շիլին, . . կորսուէ՛, ազտոտ օտարական . . .

Հայր սուրբը՛ շիգթած այն բիրտ յարձակումէն, բայց անդրշուկի իր հրճուանքի սրռշած գինին վրայ, հեռացաւ անմիջապէս վախկոտ ոճարազ քայլերով:

Վանառուջ բայց փնչիմադրելի ֆետարքըութենէ մը մղուած հետեւեցայ իրեն:

Թօթնհամ ֆօրդ Բօրտի վրայ հայր սուրբը մօտեցաւ առաջին հանդիպած կնկան, քանի մը վայրկեան խօսեցաւ անոր հետ ու ձգեց զայն ուրիշի մը հետապնդելով:

Յետոյ ուրիշ մը, ուրիշ մըն ալ, ու այսպէս շարունակ դէմը ելլող ցնծուհին հետ քանի մը բառ կը փոխանա-

կէր ու կ'անցնէր կ'երթար: Կ'երեւի թէ ա'լ չէր համարձակեր առաջարկել իր ճղճիմ սիրագինը ու անոնց պահանջածը իմանալէն վերջ, ճամբան կը շարունակէր յուսահատ:

Բայց մէկէն կանգ առաւ հայր սուրբը կաւուր Սթրիթի կայարանին ըով: Դիմացի մայթէն անշուք տեսող՝ ազ- ջիկ մը զինքը ճանչցած էր ու վազելով իրեն կը մօտենար խնդուներես:

Հին ծանօթ մը կը թուէր ըլլալ: Գոնէ ա՛տոր հետ սակարկելու տաղտուկը չպիտի սնենար: Հա- ղիւ տասնը ութ տարեկան ըլլալու էր, խոշոր կապոյա- աչքերով ու հիւանդագին տեգունութեամբ խարտեաշ ազ- ջիկ մը՝ որ մտերմօրէն կը խօսէր հիմա իրեն հետ ու

«հայրիկ» կը կոչէր մեր պատկառելի հայր սուրբը:

— Է՛հ, պիտի երթանք մի, հայրիկ . . .

Ու թեւ թեւի ըովստի շիլ փողոցի մը պատերուն տակէն հեռացան:

Վայրկեան մը մայթին վրայ կեցած, նայեցայ ի- ՚րենց ետէն:

Չէ՛, զիկտեմբերի տրտում դիշերուան մը մտեցնող ամուրիութեան մէջ, իր ծերացած կաշիին տակ արթնցող յայրատ կամէութիւններու հալածող սարսուռը, ու օտ թերեւ անօթի սպասող երիտասարդ բուզին վրայ գնուած իր տոփանքի ցաւազին թօթուրտուքը չպիտի սճիւր մը սեպէի իրեն անշուշտ:

Բայց մութ ճամբուն երկախքը ուրկից տռն կը դառնայի, մտքիս մէջ կոտտաց անընդհատ ու խղճի խայթի մը պէ՛ծ դալարեց զիս բռնաւոր մտածումը թէ՛ ցորեկ- ւան լոյսին բռնաքարուած մեր հեռաւոր քիչրճըրը ու մայրերը — սրոնց եղբրական խօսքը չէր մոռնար ընել իր բոլոր քարոզներուն մէջ — իրենց արիւնի բախիւր ու նէին հայրսուրբին ցոփութեան վարձքին մէջ:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ

Գ

Նախորդ յօդուածը ցոյց տուաւ թէ զրականութեան համար բնածին յատկութիւններով օժտուած Հայերը Հայաստանի հին ու նոր կեանքէն կրնային միայն հայցել իրենց ներշնչարանը. ուստի և Հայ ազգին, Հայ հայրենիքին տաք սիրովը սիրազեղուն մատնագրութիւն մը, կրօնական պատնէշներու վրայէն բարձրաթոնիչ ոգևորեց

ու խանգաղանց ամբողջ Հայութիւնը: Բայց զրական կոչումը ինչպէս ամէն ժողովրդի նոյն և Հայոց մէջ ալ սակաւաթիւ անձերու բնատուր պարգեւ մըն է որ նպաստաւոր պայմաններու կը կարօտի փայլելու համար. իսկ հայրենիքին սէրը մտքին մենաշնորհը չէ. նա՛ն և ա՛ռաջ՝ սրտին ծնունդն է անիկա: Արմուտանի կարգալ

դրել չդիտցող տասնըինը տարեկան հովիւ Ղարա Մկրիմ հոգին կ'եղբայրսկցի Հայրիկի հօգիտն ազգային սերօյն մէջ: Երկուքին տարբերութիւնը այն է ինչ որ սպարապետինն ու պարզ զինուորինը: Ա՛ն ալ հայրենիքի անձնուէրը, ա՛ն ալ. միայն թէ, մէկը հօգի սննի, միւսը՝ հօգի և միտք: Հայրենիքը կը փրկուի երբ պարզ հօգին կը հպատակի մտքին ուժովը հօրացած հողիին: Վերջին

յիսուն տարիներու մեր պատմութիւնը ցոյց կուտայ որ ինչպէս ոչ-լուսաւորչական Հայոց զանազան աստիճաններով զարգացած դասակարգերը, նոյն և չափաւոր կամ քիչ կրթութիւն ստացողները սիրեցին Հայաստանը ու Հայութիւնը, ու իրենց ազգին օգտակարապէ՛ծ ծնուա-

յելու աշխատեցան: Ուրիշ անգամներ առիթ ունեցած եւ յիշեցնել զանազան պարագաները սրոնց մէջ Հայերը առանց դաւանանքի խտրութեան միասին աշխատած են ու կ'աշխատին, միևնոյն հայրենիքին համար: Այժմ պէտք չեմ զգար պատմական աւելի ընդարձակ տեսու-

թեան մը. ամփոփում մը կը բաւէ:

Լուսաւորչական եւ ոչ-լուսաւորչական հայերը կազմեցին Բնօրհործական ընկերութիւնը՝ կիլիկիա երկրագործութիւն ծաղկեցնելու նպատակաւ, կրթական երեք ընկերութիւնները՝ Հայաստան ուսում տարածելու առաջադրութեամբ: Ու ետքէն ալ ազատութեան գաղափարը միութեան կեդրոնը եղաւ ու կը մնայ՝ Պերլինի ՅԵՐԳ յօդուածին գործադրութեանը հանգարտօրէ՛ս աշխատելու հետամտողներէն մինչև ամենատաք յեղափոխականնե-րուն համար:

Ուշադրաւ իրողութիւն մը. կաթօլիկ Հայերը թէ՛ աշխատութեամբ, թէ՛ զբաժով շատ նպաստեցին կրթական ընկերութեանց բարդաւաճմանը, ու չեմ յիշեր թէ, գոնէ մինչեւ 1881, կրթական երեք ընկերու-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

թիւնները Հայաստանի կաթօլիկ ո՛ր և է գիւղի մը գաստի-

արակութեանը նպաստած ըլլան: Այս զանցառութիւնը խարական հոգիի չվերագրուի: Վարժարան բացուած աշխարհադրական շրջանակները պատեհութիւն չէին ընծայած հայ կաթողիկոսի գեղի մը հանդիպման: Կարևորը այն նկատողութիւնն է թէ կաթողիկոսի Հայերը ո՛ր է զիտողութիւն ընել մաքեբնէն շանցուցին: Աշխատութիւնը ընդհանուր Հայութեան համար էր:

Աւելորդ չեմ սեպեր անգամ մըն ալ միտք ձգել ցոյց մը որ կաթողիկոսի Հայոց հայրենասիրական զգացումներուն վկայութիւնն է: Ազարեան պատրիարք 1888ին օր մը Դրան յայտարարեց թէ օսմանեան իշխանութիւնը քաղաքական հեռատեսութեամբ պէտք է նպաստէ Հայոց մէջ կաթողիկոսութեան տարածմանը, զի կաթողիկոսի դաւանանքը հայ ազգայնութեան գաղափարին թշնամին է:

Իրութեան գործակալութեան միջոցաւ Եւրոպա հաղորդուած այս ճիշդ տեղեկութիւնը երբ «Արեւելք» թարգմանեց, կաթողիկոսի Հայերը մոլեղեցան: Ազարեան պատրիարք շուարած, շիտած, պարտաւորեցաւ կառավարութեան զիմել ու այս լուրին հերքում տալ, եւ ասով իր ժողովուրդը հանդարտեցնել:



Մեր կրօնական կոիւններուն հարիւր տարուան պատմութեան ընդարձակ ուսումնասիրութեամբ կարելի պիտի ըլլայ ճշգրտօրէն ըմբռնել Հայ ազգին ժամանակակից ձգտումը: Կաթողիկոսի Հայեր շատ անգամ դարձանք յայտնած են որ լուսաւորչական Հայերը գրեթէ ատեղութիւն չունին աւետարանական Հայոց զէմ, մինչդեռ թէ՛ պարզ ժողովրդին մեծամասնութիւնը, թէ՛ լուսաւորեալներու խոշորէկ թիւ մը ընդհանրապէս թշնամացեր էին կաթողիկոսութեան ու կաթողիկոսի Հայոց: Դաւանանքի անշրպեալ լուսաւորչականութեան ու աւետարանականութեան միջեւ աւելի լայնափեռեկ ըլլալով քան թէ ընդ մէջ լուսաւորչականութեան ու կաթողիկոսութեան, որոնք բազմաթիւ հիմնական վարդապետութեանց տարբերութեամբ չեն բաժնուիր իրարմէ, աւելի բնական պիտի համարուէր եթէ լուսաւորչականներու կրօնամոլ ատեղութիւնը հակառակ ուղղութեամբ յայտնուած ըլլար:

Դիտողութիւնը տրամաբանական է, ուստի երեւոյթը տարօրինակ է անբացատրելի պէտք էր համարիլ: մեկնութիւնը սակայն պարզ է: Լուսաւորչականներուն ատեղութիւնը բոլորովին կրօնամոլութեան ծնունդ չէ, այլ մեծ մասամբ ազգասիրութեան: Աւետարանական Հայերը ու անոնց քարոզիչները Հայոց ազգայնութեան թշնամիները չճանչցուեցան. ազգին պահպանման էն ամուր յենարաններէն մին, լեզուն, ժողովրդին մէջ զարգացնելու աշխատելով Հայութեան բարեկամները նկատուեցան, ազգային զգացումն ալ հետեւաբար աւետարանականներուն զէմ չէր զրգուեր: Անդին, կաթողիկոսութեան էն հեղինակաւոր առաջնորդները, Քուլէճցի անունով ճանչցուածները, կաթողիկոսի Հայոց մէջ հայ հոգին սպաննելու

աշխատեցան, ազգայնութեան հզօր զգացումը վտանգաւոր համարելով կաթողիկոսութեան զարգացմանը: Այդ կղերականները որ իւրացուցած էին վատիկանի Բրոբականային հոգեբանական դիտութիւնը, իրենց նպատակին հասնելու համար ուզեցին հետզհետէ քակել այն բոլոր կապերը որոնցմով հայ կաթողիկոսները Հայութեան մեծ զանգուածին պրկուած կը մնային: Նախ եւ առաջ հաւածիչներ եղան մայրենի լեզունչ զոր կաթողիկոս Հայոց մոռցնել տալու հետամտեցան, անոր տեղ թիւրքերէնը կաթողիկոս ընտանիքներուն իրր տոհմային բարբառը նուիրագործելով: Գրաբարը, եկեղեցական արարողութեանց յատկացած լեզու, իրենց համար կը համապատասխանէր եւրոպական կաթողիկոսութեան լատիներէնին, ժողովրդին վրայ անազգեցիկ, ուստի եւ անոր ետեւէն չինկան: Կաթողիկոսի Հայերը Հայաստանեայց եկեղեցիին ժողովրդական հիմնարկութեան մը եւ ինքնավար վարչութեան մը սկզբունքները հաւատարմօրէն պահպանած էին: Քուլէճցիները՝ որոնք էն ականաւոր ներկայացուցիչը Հասունը եղաւ, աշխատեցան լատին եկեղեցիին միապետական դրութիւնը մոռցնել հայ-կաթողիկոս եկեղեցիին մէջ: Հայութեան այդ թշնամիները իրենց զէմ կանդնած տեսան Միթիթարեանները որոնք կաթողիկոսութիւնը հայացնելու ծրուգրով կը գործէին, ուստի է իրենց հակաակորդներէն միշտ վատիկանի առջև ամբաստանուեցան իրր հայասերներ, Հայութեան յարողներ, հետեւաբար եւ ոչ զուտ, անարատ կաթողիկոսներ:

Միկնոյն ժամանակ Քուլէճցիները իրենց ժողովրդին միտքը կը թունաւորէին տեսակ տեսակ աղուններու վարպետ մատակարարութեամբ: Իրենց ձեռք բերած յաջողութեան վրայ գաղափար մը տալու համար յիշեցընեմ հին բարքերէ մէկ երկու դիծ: Տղայութեանս շատ անգամ ականջովս լսած եմ կաթողիկոսի Հայեր որոնք լուսաւորչական Հայոց գաղաղներուն հտեւէն կը բացազանչէին: Ճեհեհեհեհեհ պիտի քիչքիչ տաճաւ: «Դիտելին կոնդ մը էս»: Լուսաւորչական գրացնի մը, բարեկամի մը յուրակաւորութեանը ընկերացող կաթողիկոսի Հայեր չէին ուզեր եկեղեցիէն ներս մտնել. նուազ խղճահարները մինչև բակը կուգային, առանց երբեք ոտքերնին գաւթիթը գնելու: Ու գիտենք թէ մինչեւ հիմակ ալ կաթողիկոս եկեղեցական մը արտօնուած չէ լուսաւորչականի մը դազողին հտեւէն գացող բազմութեան ընկերանալ իրր պարզ յուղարկաւոր: Ներսէս պատրիարքին թաղմանը ո՛ր է Հայ կաթողիկոս վարդապետ չերեցաւ: Հրամանը Հոմէն է: Դպրոցական կաթողիկոս ընկերներս ինծի հարցուցած են թէ «լուսաւորչականները Առտուածածին կը հաւատան, Երրորդութիւնը կը ճանչնան»: Այս հետաքրքրութիւնը ցոյց կուտար թէ Քուլէճցիները ի՛նչ տեսակ գաղափարներ կրնան տարածած ըլլալ ընտանիքներու մէջ: Ֆրանսայի կղերանոցի մը մէջ ուսում ստացած աշխարհական երիտասարդի մը հետ, որ լաւ ֆրանսերէն գիտէր ու շատ ալ բան սորված էր, օր մը Պոլիս երբ մեր ազգային պատմութեան վրայ կարծիքներու փոխանակութիւն

կ'ընէինք, յայտարարեց թէ Վարդան և իր ընկերները զուր տեղը մեռան. կրնային առանց անպատեհութեան Պարսից կրօնքն ալ ընդունիլ. թափած արիւննին իրենց հոգիները պիտի չփրկէ: Քանի որ իբր կաթոլիկ չնահատակուեցան, կրակապաշտ ըլլային թէ լուսաւորչական մնային, միեւնոյնն էր. միշտ զժոխքն են:» Լուսաւորչականներու դէմ ատելութիւնը կաթոլիկ Հայոց սրտին մէջ որպէս զի մշտարժարձ պահեն, Քոլէճցիները կրօնական սրտայոյզ արարողութիւն մը հիմնած էին: Ամէն շաբաթ որոշեալ օր մը ջերմեռանդ կաթոլիկ ընտանիքները իրենց տունը, սիրտը սլաքներով վիրաւոր Աստուածածնի պատկերի մը առջեւ ծնրադիր, տխրազին պիտի մրմնջէին ազօթք մը որ նսւիրուած էր « Սուրբ Կոյսին եօթը խոցերուն », կամ ըստ Քոլէճցիական բացատրութեան՝ « Սուրբ Կոյսըն եւտի խոցլարըն », անմոռաց յաւերժացնելու համար հալածանքին յիշատակը:

Կաթոլիկ Հայոց նկատմամբ լուսաւորչականներու տրամադրութիւններն ալ հրճուալիբ յիշատակներ չեն թողած: « Պոչը կտրածները » տղեղ մակղիրը լուսաւորչական Հայոց կողմէն իբր ընթացիկ բացատրութիւն մը կը գործածուէր կաթոլիկ Հայերը որակելու համար, եւ օրագրութիւնն ալ « Պապական » կամ « Բաբական » անունով յանձնար զիմած է: Հազարներով կրնան համրուիլ այն լուսաւորչականները որոնք հաստատապէս կը հատային թէ կաթոլիկ Հայոց եկեղեցիներուն մէջ երբեք չ'արտասանուիր Հաւատածքին վերջնութեբ մասը, որ է « Իսկ որ փոփոխելիք են կամ այլալեւիք զայնպիսիսն նզովէ կոթողիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցի », վասն զի « փոփոխելիք կամ այլալեւիք »ը կը նշանակէր կաթոլիկ Հայերը, եւ ամբողջ « Իսկ որք »ը Հայոց եկեղեցիին բանադրանքն էր ընդդէմ կաթոլիկ Հայոց:

Նախկին ատելութեանց ամբողջ ուժգնութիւնը յիշեցնելու համար պէտք չեմ տեսներ աւելի բազմաթիւ օրինակներու: Այս մէկ քանի յիշատակութիւնները բաւական կը համարիմ: Թէև պատմական մեծ դէպքերու կարեւորութենէն զուրկ իրողութիւններ, բայց ժողովրդին զազափարներն ու զգացումները ճշգրտօրէն կը կերպարանեն աչքերնուս առջև:

Հայաստանեայց եկեղեցին ազատամտ է, Քրիստոնէութեան տարբեր տարբեր զաւանանքներու պատկանողները հոգեկան կորուստի գատապարտուած չի համարի՝ պարզապէս իրենց հաւատքին պատճառաւ: Հայ ազգը ազատամտութիւնը կը տարածէ նոյն իսկ մինչև ոչ-քրիստոնեաներուն: Ամենայն Հայոց հայրապետ Հայրիկը կովկաս իսլամ մզկիթի մը յարգանքի այցելութեամբը պէտք է նախանձեղի օրինակ մը հանդիսանայ եւրոպացի կրօնապետներու: Կրօնքի մէջ ազատախոհութիւնը Հայոց ցեղային նկարագրին մաս կը կազմէ: Յեղի մը նկարագիրը քանի մը տարուան մէջ չի ջնջուիր դէպքերու վաղանցուկ ազդեցութեամբ: Դարերը կազմեր են այդ նկարագիրը, դարերը կրնան կամաց կամաց զայն այլափոխել: Հայը առժամապէս միայն մոլեռանդ է: Կրօ-

նական ատելութիւնը կրքէ ծնած ախտ մըն է որմէն Հայը կը բուժի: Ժամանակին հետ եւ շնորհիւ կարգ մը բարեյաջող հանգամանքներու որոնց ամփոփումը նախորդ յօդուածներուս մէջ համառօտակի ներկայացուցի, եղբայրատեաց զգացումը հետզհետէ տկարանալու վրայ է: Հետաքրքրական է աչքի առջեւ բերել քանի մը կարևոր նշաններն այդ յառաջդիմութեան, նոյն իսկ այն շրջանակներուն մէջ որոնց չեն պակսիր աններողամտութեան պատրուակները:

Մատթէոս կաթողիկոս մերժեց եպիսկոպոս ձեռնադրել Գաբրիէ Այվազովսքի և Խորէն Գալֆայեան (յետոյ Նար-Պէյ) վարդապետները, առարկելով թէ կաթոլիկութենէ դարձեր են. « Չեռք չի տար որ անոնք մէջերնիս առինք, մէջ մըն ալ պիտի ելլեմ եպիսկոպոս ձեռնադրեմ, » յայտարարած էր: Իր յաջորդը, Գէորդ կաթողիկոս, այդ երկու վարդապետներն ալ եպիսկոպոսութեան բարձրացուց: Սակայն ամէն անգամ որ Խորէն եպիսկոպոսը պատրիարքութեան պաշտօնին ընտրելի կը ներկայանար, յաջողութիւնը մեծապէս կը դժուարանար իր նախկին վաւանանքին պատճառաւ: « Կաթոլիկութենէ դարձող վարդապետ մը շատը շատը եպիսկոպոս կրնանք ընել, բայց պատրիարք բնա՛ւ, » կ'ըսէին անոնք որ իրենց բուժները Նար-Պէյի ընտրութեան զլանալու ուրիշ պատճառ մը ցոյց չէին իտար: Եւ 1896 ին ահա այդ սկզբունքն ալ անհետացաւ: Ստացուած մասնաւոր տեղեկութեանց համեմատ եթէ Օրմանեան պատրիարքը իր պաշտօնին վրայ զետնուած ատեն գիտնար եւ կարենար ազդին օգտակարապէս ծառայել, ամենայն Հայոց կաթողիկոսի յառաջիկայ ընտրութեան ինք պիտի հանդիսանար Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսին էն լուրջ մրցակիցը:

Կ. Պոլսոյ հայերէն կարեւոր օրաթերթ մը 1890ին կը յայտարարէր թէ Մխիթարեան վարդապետները կաթոլիկ ըլլալով չէին կրնար մասնակցիլ Իզմիրեանց մըրցանակաբաշխութեան: 1899 ին Մխիթարեան մը իր բաժինը կ'ունենար այդ մրցանակէն:

Երբ Սուքիաս Վ. Պարոնեան Մխիթարեան վարչապետ մըն էր, հրաւիրուեցաւ Նուպար-Շահնսզարեան վարժարանը հայերէն լեզուն դասախօսելու: Լրագիրները խոռվայոյզ ազմուկ յարուցին թէ պիտի չ'ընէին իր կաթոլիկ վարդապետ մը երբ լուսաւորչական Հայոց դպրոցէն ներս մտնէ՝ ժողովուրդը կը դայթակղի եւ կամաց կամաց կաթոլիկութեան ճամբան կը բռնէ: Սուքիաս Վ. Պարոնեանը շուտով պաշտօնէն հրաժարեցուցին: Տարիներ ետքը, 1887 ին, Պոլսոյ Ուսումնական Խորհուրդը շրջաբերականով մը կը ծանուցանէր լուսաւորչական Հայոց դպրոցներուն թէ ոչ-լուսաւորչական ուսուցիչները այդ հաստատութեանց մէջ դասախօսելու իրաւունքէն զրկուած կը մնան, իրենց կրօնական զաւանանքին պատճառաւ: Քանի մը տարի ետքն ալ, 1890ին, օր մը երկու Մխիթարեան վարդապետներ երբ « Արևելք » ի խմբագրատունը կը գտնուէին, միևնոյն ատեն հոն ներկայ էր Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին Հոգաբարձութեան ազգեցիկ

անդամներէն մին: Խօսակցութեան միջոցին կարծիք յայտնեցի թէ քանի որ Կեդրոնական վարժարանին մէջ գրաբարի ուսուցումը կը շարունակուի, օգտակարագոյն պիտի ըլլար դասախօսութեան պաշտօնը յանձնել Մխիթարեան վարժապետի մը: Կեդրոնականին խնամակալը կոշտ լեզուով մը յայտարարեց թէ « Հայ ժամուն շրջափակին մէջ զետեղուած վարժարան մը չի կրնար կաթոլիկ վարժապետ մը իբր ուսուցիչ ունենալ:» Տարի մը վերջը « Հայրենիք»ը կը հիմնուէր. կրօնական ազատամտութեան գաղափարին հետ կը պաշտպանէինք նաև հայ վարժարաններու մէջ ուսուցչութեան պաշտօնին համար դաւանանքի անխտրութեան գաղափարը: Եւ ահա օր մը լսեցինք թէ Կեդրոնականին խնամակալութիւնը հըրաւիրած է Վենետիկի միաբան քաջ զրաբարագէտ Հ. Դաւիթ Վ. Նազարէթեանը բարձրագոյն հայերէնի ուսուցչութեան պաշտօնին: Այդ կարեւոր որոշումը արուեր էր խնամակալութեան ամբողջակի մէկ նստին մէջ, նախազահուութեամբ Աշըգեան Խորէն պատրիարքին: Հայոց պատրիարքը իր մոլեռանդութեամբը համբաւուար էր. խնամակալութեան ամէնէն ազդեցիկ անդամն էր Աբիկէֆէնտի Ունճեան, մոլեռանդ եւ կաթոլիկատեաց. ու նստին ներկայ եղած էր ա՛ն որ « Արեւել»ի խմբագրատունը այնքան կոպիտ վարմունք մը ունեցաւ երկու վարժապետներուն նկատմամբ: Տասնը հինգ քսան տարուան ժամանակամիջոցի մը մէջ պաշտպանուած գաղափար մը ահա գործնականապէս կը շնչուէր նոյնիսկ կրօնամուլ լուսաւորչականներու ազդեցութեամբը: Այդ գաղափարը չէր կրցած արժատ ձգել ազգային մտքին մէջ, հակառակ այն ամէն ջանքերուն զոր ազդեցիկ հրապարակազիրներ, ուսուցիչներ, եկեղեցականներ ի գործ դրած էին:

Լուսաւորչական Հայոց պաշտօնական մարմիններուն եղբայրակցական այս ազատամտութեան կաթոլիկ Հայոց պատրիարքարանը պատասխանեց եղբայրատեաց մոլեռանդութեամբ: Աղարեան պատրիարք, իբր հոգեւոր պետ կաթոլիկ Հայոց, յարգիլեց Մխիթարեան վարժապետին իրեն առաջարկուած դասախօսութեան պաշտօնը ընդունիլ: Այդ միջոցներուն Աղարեան պատրիարքին հետ տեսակցութեան մը քննութիւնովս, այդ արդեւթի մասին ալ խօսեցայ: Պատրիարքը ջանաց իր որոշումը արդարացնել կարգ մը պատճառաբանութիւններով, որոնց նկատմամբ ըրած շատ քաղաքավարի դիտողութիւններս անպատասխանի մնացին: Վերջապէս պարտաորոշեցաւ դաճանցած սրտնեղութեան ցաւազին շեշտով մը բռնի. « Ի՞նչ կրնամ ընել. դուք կարող էք իմ նկատումներս ըմբռնել: Կեդրոնական վարժարանը մտնելու համար պէտք է եկեղեցիին դռնէն անցնիլ, ու իմ ժողովուրդս պիտի գայթակղի երբ պիտի ձեռնարկուի վարժապետին Հայուն ժամէն ներս մտնելը տեսնէ: Ատ ժողովուրդը ա՛լ չի կրնար բռնել:» Այս արդարացման դէմ ա՛ եւ է առարկութիւն չունէի. կաթոլիկ Հայոց կրօնական պետը ինքնազլուի իշխանութիւն մը չէ. Վատիկանի գաւա-

նանքներուն պարտաւոր է համակերպել: Կաթոլիկութիւնը միջազգային եկեղեցի մըն է, և ոչ թէ ժողովրդի մը յատուկ ազգային հաստատութիւնը. երբ ազատամտութիւնը այդ եկեղեցիէն ներս մտնէ, ընդհանրական կաթոլիկութիւնը կը քանդուի: Անհրոզ մոլեռանդութեամբ կը պահպանուի արդի կաթոլիկութիւնը, և չի կրնար բացառութիւն ընել ափ մը արեւելքցիներու համար: Բայց կաթոլիկ Հայոց լուսաւորեալ մասն ալ անշուշտ կ'ըմբռնէ թէ լուսաւորչականներու ստուար մեծամասնութիւնը այսօրինակ նրբաբանութեանց ընտելացած չէ. ու երբ կը անսնէ խարական ոգին որ կը բղիթի կաթոլիկ Հայոց պաշտօնատունէն, ինքն ալ կը խրաչի:

* * *

Կ. Պոլսոյ մամուլին մէկ մասը երբեմն շատ հետամուտեցաւ, և հիմակ ալ մերթ ընդ մերթ կ'օգործի, մրցակից մասին դէմ անադնիւ պայքար մղելու համար օգտուիլ կրօնական երկպառակութիւններէ, և շահագործել ժողովրդին դիւրագրգռութիւնը և տկարամտութիւնը: Կաթոլիկ Հայեր Պոլսոյ հայ օրագրութեան մէջ միշտ առաջնակարգ դիրք մը զբաւած են իբր խմբագիր կամ սնօրէն. լուսաւորչական օրագրապետներ սրտնք անկարող գտնուած են հասարակ իրենց կաթոլիկ պաշտօնակիցներուն, ջանացեր են անոնց երեսին տալ կրօնական գանձանանքնին, յուսալով որ կը յաջողին ժողովրդին գոնէ մէկ մասը թշնամաբար տրամադրել զեպի այդ թերթերը:

Պոլսոյ ծրագրութեան մէջ մեծ համբաւ վայելած է հանդուցեալ հայ-կաթոլիկ վարդան փաշա, Մեծնաշք Հավատի խմբագիրը: Այդ թերթէն ետքը հրապարակ ելաւ Թերթիմանը Էֆրէսարը, որուն յաջորդն է հիմակուան Ճերիտի Եարգիէն. երկուքն ալ հայ-կաթոլիկ Պ. Ճիվէլէկեանի տնօրէնութեան ներքեւ գտնուած են: Վարդան փաշա կը գրէր Թերթիմանին մէջ. այդ աշխատակցութիւնը մեծապէս նպաստեց թրքաբարբառ թերթին յաջողութեանը: Ուրիշ թրքաբարբառ թերթ մը, Մակնուսէ, որուն անկուրք երագելու ուրիշ պատճառներ ալ կային, շատ փաստեցաւ Թերթիմանի մրցումէն, ու ջանաց մրցակցին կաթոլիկութենէն օգծուել: Բնականաբար, պիտի աշխատէր, եւ աշխատեցաւ ալ, լուսաւորչականներուն ու ոչ-լուսաւորչականներուն միջեւ գծուութիւնը ոգևորուած պահել որպէս զի հետեւանքներէն Թերթիմանը թէ՛ բարոյ յայլ և թէ՛ նիւթապէս փաստուի:

Պ. Ճիվէլէկեան յաջողած էր նաև իր թերթին մէջ հայաբարբառ բազմաթիւ հրատարակութիւններով Թերթիմանը հրապարիչ ընծայել թիրքերէն չգիտցողներուն ալ, ու ազգային լուրերու առաջնութեամբը մեծ համբաւ ստանալ: Հայերէն թերթերու անկարող տնօրէնները եւ խմբագիրները միացան Ճերիտի դէմ: Ու եզաւ տտեն մը որ բոլոր լուսաւորչական խմբագրապետները զաշնակցելով պահանջեցին Պատրիարքարանէն պաշտօնական թուղթ եւ ազգային լուր չհաղորդել կաթոլիկ արտօնատէր

ունեցող թերթին, բայց ազգային վարչութիւնը չհպատակեցաւ այդ պահանջումին. Մասիս ու իր արքանեակները յաղթուեցան:

Հայրենիքի հիմնարկութիւնը, ժողովրդէն դատած ընդունելութիւնը, ազգին վրայ ունեցած ազդեցութիւնը ամենամեծ յաղթանակը եղան ազատամտութեան եւ եղբայրակցութեան գաղափարներուն: Թիֆլիս Մշակ յայտարարած էր թէ ինք զուտ հայ թերթ մըն է, Գրիգոր Արծրունիին կրօնքը ո՛ր եւ է նշանակութիւն չունի թերթին ուղղութեանը մէջ: Պոլիս ալ նոյն ճշմարտութիւնը Հայրենիքին համար: Ու այսօր Պոլսոյ հայ մամուլը որքան հայ լուսաւորչական այնքան ալ հայկ կաթնլիկ տնօրէններ ու խմբագիրներ ունի:

Այս տեսակ տեսակ յիշատակութիւններէն կը տեսնուի թէ մամուլին մէկ մասը կը ջանայ շահագործել հայ ժողովրդին կրօնական զգացումները: Ոչ-լուսաւորչական Հայերը պէտք չէ վիրաւորուին այդպիսիներու դրածներէն, մանաւանդ երբ կը տեսնեն թէ ազատամտ ու եղբայրասէր մամուլը ընդհանուր հայ ժողովրդէն ջերմ ընդունելութիւն կը գտնէ: Իսկ կան լուսաւորչականներ որոնք խղճմտօրէն համոզուած են թէ լուսաւորչականութենէ զուրս ուրիշ ո՛ր է գաւանանք կը տկարացնէ Հայութեան ազգային ոգին: Ամեն անկեղծ համոզում պէտք է յարգուի հակառակորդներու կողմէն. բայց խելացին անոնք են որ կացութեան մը ճիշդ իրականութիւնը կ'ըմբռնեն եւ կը ջանան անոր անպատեհութիւնները թեթեւցընել: Այսօր Հայերը կրօնապէս բաժանեալ են. ազգին ստուար մեծամասնութիւնը լուսաւորչական է, ու փոքրամասնութիւնը երկու տարբեր գաւանանքներու կը պատկանի: Ո՛չ լուսաւորչականները իրենց գաւանանքը կը փոխեն, ո՛չ կաթնլիկները, ո՛չ աւետարանականները: Ու մեր արդի զարգացումը, մեր տոհմային նկարագիրը, ընդհանուր Հայութեան շահերը չեն ներքեր որ կրօնական ատելութեամբ լցուած սրտերով զիրար բզբկտենք: Համագումներն ինչ որ ալ ըլլան, հարկ է իրողութիւններուն համակերպիչ ու ցեղային արիւնի եւ հայ ազգայնութեան գաղափարին մէջ զիրար ընդգրկել:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՎԵՐՁ

ԷԶՍԻԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Կը յիշուի թէ 98ի աշնան Բեդրպուրիի Երկրարանական համաժողովին անդամներէն շատեր խմբովի կողմէն այցելեցին: Առեւցած տիկին Սոսնիստա Մեօնիէն, ֆրանսացի մեծ երկրարանիկ կիւնը, իր այդ ամբողջութեան տպաւորութիւնները այժմ հրատարակուած է գրքով մը, «Ս. Բեդրպուրիէն Արարատ»: Անկից կը գրադէնք այսօր Էջմիածնի նշարարած գրուիք, յաջորդիկ պահելով Անիի աշերակներուն նկարագրութիւնը:

Հետոն, զանգակատուններ, փշտարակներ . . . Էջմիածին:

Սիրաս կը տրոփէ, որովհետեւ գիտեմ թէ այնտեղ սրբազան վայր մըն է, անպակէ մը՝ ժողովրդի մը դրժբազդութեանը, հատուցին, պիշատակներուն եւ յոյսերուն համար:

Ժանեկաւոր պատերով ու բերդակներով բոլորուած եկեղեցիի մը առջեւն կ'անցնինք, յետոյ անբակի մը առջեւն որ նոյնպէս եկեղեցի մըն է զեռ: Կիսկատար շինութիւններ, թափուր գետիւններ, արդի տուններ՝ պատըզգամներով եւ քոչաւանդաւ կերպերով. Վաղարշապատն է ասիկա, այսօր զիւր մը, ատենօք մայրաքաղաք մը: Վերջապէս, կառքէն կ'իջնենք: Դունէ մը կ'անցնինք, ու վանքին շրջափակին մէջն ենք:

Բակը բազմաթեմամբ լեցուն է. ուխտի ատեն է, և շատ հեռու տեղերէ Հայերը կուգան իրենց սրբավայրը, որ ամէն կերպով զ'ընդունի զանոնք, անոնց տալով իր ազօթքները, օրհնութիւնները, ինչպէս նաև ուտելիք ու սեղանաձիւքութիւնը, որ քաղցի մը բազմութեան պէն խստն է, իր հարուստներն ու աղքատները ունի. անոնք զբարզներ ալ ունի, որոնք ձեռքէ ոտքէ զուրկ, գիտիւնը կը քաշկոծուին, կամ որոնց աչքերը պայթած են, դէմքերնին սպիւնքով լեցուն, ու պատերը կ'ափփին առ խարխափ: Եկեղեցիները յաճախ իրենց դրանը առջեւ թող կուտան կաղաց-կուրաց-գօսացելոց ցուցահանդէս մը: Թիֆլիսի մէջ, մուրացիականները իտես կը գնին խեղճութիւններ որոնք մեր հիւանդանոցներուն մէջ ախտաբանական զարմանալիքներու պէս պիտի պահուէին: Բայց Էջմիածին այդ արհեստով խեղճանգամները չունի. մեր հոն տեսած հաշմերը պատահաբար էր որ իտես զրած էին իրենց զերենք, ու լոկ ուխտաւորներուն համար. բնաւ ակնկալու չէին Եւրոպացիներ ունենալու իր հանդիսատես, և ընդհուպ անյայտ եղան: Այդ մարդիկը Թիւրքերուն զոհերն էին: Տերակ մը ամօթխածութեամբ, զանոնք մինէ ծածկեցին: Եւրոպացի գիտէ, ինչ հարկ ամչցնել անոր Էջմիածին զբիպ հիւրերը, անոնց ցոյց տալով թշուաճութիւններ որոնց օգնութեան չը հասնու:

Հաշմերուն տեսիլը այնչափ արագ ու այնչափ անհոկնալի եղած էր որ անելի՛ անհանգստութիւն մը պնտնտնոց մեզի բան վիշտ: Դէպի մեզ կը յառաջանային, ժպտուն, հիւրընկալ, ձեռուրնին երկնցուցած, սեփիւնով մարդիկ, սե մետաքսէ վեղարով, Էջմիածնի վարդապետներն ու եպիսկոպոսները: Մեզի ընդարձակ շէնք մը մտցուցին, սանդուխէ մը առաջնորդեցին, և լայն ճեմելիքի մը երկայնքը՝ մեզի նըջարաններ տարին: Կարծեք էին թէ իրենց հիւր պիտի ըլլայինք, և զուարթ մեծ սենեակներ ու ճերմակ անկողիներ պատրաստեք էին մեզի: Մէկ բանի կին էինք մենք որոնց համար ալ տեղ պատրաստուած էր, և թերեւ էրիկմարդերուն համար պատրաստուած էն ալ անելի աղէկ, ինչպէս կը պահպանէ կնահածօյութիւնը, մինչդեռ ընդհակառակը

Շահողէո կրօնաւորներուն վանքին մէջ (Փրանսա) կի- ները վանքէն դուրս կը բլուրն անշահ տեղ մը, որ ան- շահ անուն մը ունի, Բուժարան: Էջմիածնի կրօնա- ւորները, իրաւցնէ սրտառուչ փափկանկատութեամբ մը, ամէն հոգ տարած էին մեր բնակութիւնը հաճելի դար- ձընելու: Մեղք որ ի գուր այդչափ ձանձրութիւն յանձն առեր էին. մէկ քանի վայրկեան միայն պիտի կենա- յինք այդ սենեակները, ճամբուն փոշին թոթուելու համար: Մըջափ պիտի ուզէի օրերով մնալ այնտեղ ու երազել, բաց լայն պատուհանին առջեւ:

Մեր արդուզարդը երկար չտեւեց: Ճամբորդութեան զգեստներ միայն ունէինք որոնք արդէն շատ բան քա- շած էին, որովհետեւ թիֆլիսէն պզտիկ պայուսակներ միայն թոյլ տրուած էր առնել հետեւինս: Ու պիտի ընդունուէինք կաթողիկոսէն, այն մարդէն որ ամբողջ ժողովրդի մը համար թաղաւորէ մը աւելի է: Հոռի մէջ, Պապին առջեւ կրելիք հագուստիդ մանրամասնու- թիւնները առաջուց կը կարգադրեն: Էջմիածին, քեզ կ'ընդունին երկաթագամ կօշիկներով, ամէն դոյնէ հա- գուստներով և ասուէ շապիկներով որոնցմով քազինոյէ մը ներս չեն առներ քեզ: Էջմիածին սակայն նրբա- ճաշակ հիւրընկալութեամբ մը կը մեծարէ իր այցե- լունները: Խնամառատ սպասով սեղան մը ընդնշմարած էի: Ու կը նեղուէի կոր իմ կտակէ չփակիս, իմ յարդէ գլխարկիս, թարշամած ձեռնոցներուս համար զորոնք վերջ ի վերջոյ հանեցի:

Մեզ առաջնորդեցին Ճեմարանին սրահը, որուն մեծ պատուհանները կը նային ամէնէն գեղեցիկ տեսարան- ներէն մէկուն վրայ որ կրնան պարարել մարդկային աչքը և յափշտակել հոգիները, — Արարատի վրայ:

Արարատը լեռան առաջին անունն է որ արտասա- նեցինք, սրովհետեւ Աստուածաշունչին առաջին էջին վրայ է ան. պզտիկ Սրբազան պատմադրեանները կը ճշգրտեն՝ Արարատ լեռը Հայաստանի մէջ: Ու իմաս- տասէրները, գիտնականները, ամէն անոնք որ ծերացած են, և տխուր են որովհետեւ ա՛լ չեն հաւտար առաս- պելներուն, ատոնք ամենքը, երբ վարդ շրթունք ունէին և վճիտ ճակատ, հեգած են. Արարատ լեռը Հայաս- տանի մէջ:

Արդ, Էջմիածին, Հայաստանի մէջտեղն է, և մեր շլացեալ աչքերը Արարատի կը յառին: Մոն—Պլանէն 400 մէր աւելի բարձր, դաշտին ծայրը կը կանգնի ան, առանց ուրիշ լեռնակատարներու, բացի Փոքր—Արարա- տէն, ուսկից 1000 մէր աւելի բարձր է: Իր մէջը ունի գեղեցկութեան այն խորհուրդը զոր համաշափու- թիւն, ներդաշնակութիւն կ'անուանենք. իր խարխիւր կ'արժէտրէ իր բարձրութիւնը. կը ախրապետէ ան, առանց ճգմելու. վիթխարի է, և սակայն վայելուչ: Այսպէս կ'ե- րենայ ան երբոր լոյսը կ'ընդունի իր ամբողջ տարա- ծութեան վրայ: Բայց աչնան առտունները, նման ա- նոնց ուր Էջմիածնի մեծ սրահէն զայն տեսնելու հըր- ճիւններն ունէինք, ճերմակ ամպերու շուրջառով մը բո-

ւորուած է՝ ձիւներուն սկսած գծին վրայ. ու թէպէտ այս ամպերը, ինչպէս ըսինք, շուրջառ մը կը կազմեն և ոչ թէ պատմուճան մը, և սակայն մոռլ ստորուտը, ա- ռանց ոչ մէկ ծառի, առանց ժողուտ կողերու, բոլո- րովին կը շնչուի: Փոքր Արարատն ալ նմանապէս կ'ան- հետանայ ամպին ու ստուերին տակ, այնպէս որ անա- րատ դադարը կը թուի սաւառնիլ ցնորական, գերբնա- կան, կարծես հրաշքով մը կախուած դաշտին վերեւ:

Կը նայինք... և կը մտածենք այս ցուրտ ու հան- դարտ մաքրութեան և Արարատը ծնող երկրաւոր հրա- բլխային ցնցումներուն հակասութեանը: Կ'երեկակայնք զայն երբ, երախաբաց ու թխպահոծ, ծուխ, եռացող ջրի հեղեղներ, ժողուտ հատորներ ու ատրաշէկ լալա կը ժայթքէր: Դժբաղդ Հայաստանը յաճախ ենթակայ է ա- մենասաստիկ երկրաշարժներու աւերումներուն: Իր մայ- րաքաղաքը, Անի, հիմնադրուած կործանեցաւ 1319 ին երկրաշարժէ մը: Մեզի ծանօթ պատմական շրջանին մէջ, Արարատի հրաբխային գործունէութիւնը մէկ անգամ մի- այն երեւան եկաւ, 1840ին. այդ տարին, Ակոռի գիւղը, որ իր կողերուն վրայ հաստատուած էր, և պատմական Ս. Յակոբ վանքը քարուքանդ եղան, իրենց 2,000 բնակչով:

Բնութիւնը մեր բոլոր ուշադրութիւնը ինք պիտի գը- րաւեր այլտեղ: Բայց, Էջմիածին, մենք մարդիկը տա- նելու գացած ենք, ու շատ չանցած այնքան սաստկա- պէս շահագրգռուեցանք իրենցմով որ Արարատի տեսքը ա՛լ այն անգիտակից ուրախութիւնը միայն պատճառեց մեզի զոր կը կրես կապոյտ երկնքէն, նոյն իսկ երբ ա՛լ կը մոռնաս դիտել զայն:

Մեր շուրջը խմբուած, Էջմիածնի կրօնաւորները մեզ կ'առաջարկեն վանքը պտըտիլ: Երեք խումբ կը կազմուի համաժողովին անդամներէն, ֆրանսական խումբ մը, գերմանական խումբ մը, անգլիական խումբ մը, ու- ռոնց իւրաքանչիւրին կրօնաւոր մը կը միանայ իբր թարգման: Մենք երեք ենք որ Փրանսան կը ներկայա- ցնենք, ու մեզ կը յանձնեն սիրալիր, շնորհքով ու բա- նիմաց մարդու մը, Մաղաքիա վարդապետ Տէրունեանի, որ հիմակ, եպիսկոպոս ձեռնադրուած, իսպահան կը զըտ- նուի իբր առաջնորդ Պարսկաստանի և Հնկաստանի Հայերուն:

Հ. Տէրունեան մեզի կը բացատրէ նախ թէ ի՛նչ բանի կը ծառայէ սրահը ուր կը գտնուինք: Հոն տեղի կ'ունենան բանախօսութիւնները, նուազահանգէսները, ու- սումնական հանդէսները: Ազեւոր դաշնակ մը և երգի ո- նակ մը կայ հոն. պատերը զարդարուած են կաթողի- կոսներու իւղաներկ կենդանագրերով և փորագրութիւն- ներով. կաթողիկոսին յատկացուած բարձր գահուն շուր- ջը ավտոներ շարուած են աստիճանաւորներուն համար. նստարանները աշակերտներուն համար են: Ամբողջ շէնքը յատկացած է հոգեւորական վարժարանին, որ 180 աշակերտ կ'ընդունի, 14էն 20 տարեկան, որոնց շատը, բայց ոչ ամենքը, կրօնաւոր կ'ըլլան յետոյ:

Մինչդեռ վարժարանին գրատունն ենք, որ բաւական մեծ թուով հատորներ կը պարունակէ ամէն լեզուէ, կուզան մեզի իմացնելու թէ համաժողովին միւս անգամները կաթողիկոսին ջով կ'երթան: Մեր առաջնորդը մեզի կը տանի, արագօրէն անցընել կուտայ ճերմակ ու տօթակէզ բակերէ, տունէ մը ներս կը մտնէ, սրահ մը կ'առաջնորդէ, և ահա Նորին Սրբութեան առջեւն ենք: Արդէն խօսած է, և իր բարի-եկաքի մաղթանքը թարգմանած է Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը, հոյակապ մարդ մը, վիթխարի հասակով, թրմական գեղեցկութեամբ, որ կրնար իբր օրինակ ծառայել ինչ ինչ հարթքանդակներու որոնք երեւան կը բերուին Միջագետքի տաղաներուն տակէն, խորասուզուած պալատներուն մէջէն:

Միտիչ Ա. կաթողիկոսը, եօթանասունհինգ տարեկան, արտայայտիչ ու սիրալիր զիմագծութիւն մը ունի, հրալիր աչքերով, արծուեռունքն, ալեխառն նրբաթել մեծ մօրուքով. ճակատը կիսովին կը ծածկուի սեւ սնդուէ վեղարին տակ որ աղամանդէ խաչով մը զարդարուած է. իր բարձր, շիտակ ու վեհափառ հասակը մուծ մանիշակագոյն սնդուէ փիւրնով մը պարուրուած է. խորշումած փոքր ձեռքին վրայ հովուական մատանին կը շողայ. Հ.Տէրունեան մեզ կը ներկայացնէ օգոստոս փառ ծերունիին, որ, ժպտելով, կ'ընդունի մեր մեծարանքը և մեզի ըսել կուտայ որ ուրախ է Ֆրանսացիներ տեսնելուն: Յետոյ Պատոն ֆոն Րիխդֆէն խօսք կ'անէ յանուն Համաժողովին անդամներուն՝ շնորհակալ ըլլալու կաթողիկոսին իր այնքան սիրալիր ու սրտագին ընդունելութեանը համար, և կը յայտնէ խորին յուզումը զոր ամենքս կը զգանք՝ քրիստոնեայ մեծ կրօնքի մը կեդրոնը գտնուելու համար: Այս պաշտիկ բանախօսութիւնը, գերմաներէն լեզուով, Նորին Սրբութեան հայերէնի կը թարգմանէ Սիւքիաս սրբազան:

Ունկնդրութիւնը աւարտելուն, վարդապետին հետ կը վերսկսինք պտտիլ վանքը, որուն հնութիւններուն վրայ պէտք է սքանչանանք անյապաղ:

Ճեմելիք մը կը մտնենք, որ կենդանագիրներու հաւաքածոյով մը զարդարուած է: Մէկ բաւական սիրուն պատկեր մը միայն կար հոն, Էլիզապէթ Բեդրովնա կայսրուհիինը: Դիտել տանք այս առթիւ թէ Էջմիածնի մէջ շատ քիչ արուեստագէտ են, և շատ կը սխալին հոն իրերուն արժէքին վրայ: Յուցափեղկերու մէջ՝ ճարտարական շատ վարնոց պարանքներ տեսանք: Կովկաս հրաշալի գորգեր կը պատրաստէ այնքան ճոխ ու ներգաշնակ գոյներով, այնքան վայելուչ ու բազմազիմ նկարներով. և սակայն, մինչդեռ վանականներուն համեստ սենեակները այդ գորգերով զարդարուած են, կաթողիկոսը իր գահին ետեւ ունի ահռելի կապերտ մը որ չեմ գիտեր ինչ այլարանական պատկեր մը կը ներկայացնէ: Եկեղեցիներուն եւ մատուռներուն մէջ՝ սրբազան պատկերները այնչափ գէշ են որքան վեհապետներուն կենդանագրերը: Էջմիածնի վանականները նոյնպէս արժէւորել չեն գիտեր իրենց հոշակաւոր մատենագրանը. շէնքը մուծ է, զըր-

բերը՝ բացի մէկ քանիէն՝ գէշ կազմուած: Հաւաքածոյին գոհարն է Ը դարու գրչագիր Աւետարանը, փղոսկրէ կափարիչով: Էջմիածին 4,000 գրչագիր ունի. շատը պատմութեան եւ աստուածաբանութեան կը վերաբերին. թերեւս գիտնական մը նոր լոյսեր գտնէ հոն անցեալին վրայ. ու չպիտի զղշար եթէ երթար վանքը հաստատուէր՝ մէկ քանի ամիս հոն աշխատելու համար:

Գրատունէն յետոյ, զանձարանը ցուցուցին մեզ: Գանձը այստեղ հասարակ յորջորջում մըն է որ չի նշանակեր ինչ որ Աւետարանը ըսել կ'ուզէ սա խօսքով. «Ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ:» Էջմիածնի սիրտը մարգարտայեռ ու ականակուռ թագերուն, ոսկեթել ու ասեղնադործ շուրջաճներուն, խաչերուն և սրբատուփերուն հետ չէ: Այդ գեղեցիկ առարկաները, որոնք բաւական գէշ շարուած են չկապուած պահարաններու մէջ, պզտիկ սրահ մը կը զբաւեն, որուն փոշին շատ քիչ անգամ կը մաքրուի: Մեր սքանչացմանը ներկայացնել կ'ուզեն եպիսկոպոսական թագերուն ամէնէն ճոխը. ու դժուարաւ կը գտնեն զայն, որովհետեւ առջի տօնին գործածած են. վերջապէս կը գտնեն չորս ծայրէն կապուած ծրարի մը մէջ: Այս մանրամասնութիւնները պիտի չյիշէի եթէ իմ աչքիս պըզտիկցնէին հայ վանքը: Ես անոնցմէ չեմ որոնք, հրապարակաւ, անաչառ են իրենց բարեկամներուն հետ. ու չեմ կարծեր որ անհրաժեշտ ըլլայ զովետը բարեխառնել պարսաւով: Էջմիածնի մէջ ամէն բան ուղղալի սիրտս զբաւեց, նոյն իսկ կաթողիկոսին տգեղ կապերտը, նոյն իսկ անխնամ գանձը: Կրօնաւորները զովելի են՝ արուեստագէտ չըլլալուն համար: ԺՁ դարուն պապերը, Ալեքսանտր Զ, Յուլիոս Բ, Լեոն Ժ, մեծ արուեստագէտներ եղան. բայց, ատով, իբր թագաւոր ի յայտ եկան և ոչ թէ առաքեալ, աւելի՛ հեթանոս քան քրիստոնեայ: Սուրբերը ուրիշ բան ունին ընելիք բայց եթէ պատկերներու հաւաքածոն կազմել. Վէնսան տը Բոյ հաւանօրին չէր գիտեր Լեոնարտօն Բաֆայէլէն զանագանել: Արուեստագէտ չեն, բայց Գեղեցկութիւնն են: «Ես բանաստեղծ պիտի ըլլամ, ու զուն բանաստեղծութիւն,» կ'ըսէ Վիգոր Հիւսօ:

Էջմիածնի սիրտը իր թագերուն, շուրջաճներուն, սրբատուփերուն հետ չէ--ասոնց մէջ են Գրիգոր Լուսաւորչի ոսկի աջը, և ճոխ շրջանակը որ տապանին մէկ մասունքը կը պարունակէ և զոր ազատամտօրէն մեզի թոյլ տուին շօշափել ու խոշորացոյցով դիտել. — Էջմիածնի սիրտը իր գաղթականներուն, ուխտաւորներուն, աշակերտներուն հետ է: Եթէ հնութեանց մէջ փոշի կայ, ննջարաններուն մէջ չկայ: Էջմիածնի վանականները աշխատասէր են, և ոչ մտածկոտ: Աւելի՛ ապագային կը նային, քան անցեալին. արդի ոգով խորապէս տոգորուած, գիտեն գիտութեան ուժը, կը ճանչնան և կ'ընդունին մարդկային մտքին ամէն իրաւունքները, ազատութեան ծարաւը ունին: Տպարան մը ունին, հանդէս մը կը հրատարակեն, Արարատը, կրօնական գրքեր կը տպեն,

միանգամայն և ինչ որ գրականութիւնը ունի ամէնէն աւելի բարձր ու կենդանի. մասնաւոր առկա ունին Եւրոպայի մէկ հայերէն թարգմանութիւնը. իբր յիշատակ հետեւորին առինք Վեներտիկի Վաճառականը: Փոշի չկայ Էջմիածնի սպարանը:

... Ճաշի ժամը եկած է: Պէտք է սեղանատունը փութանք, որպէսզի տեղերն զտնուիք երրորդ կաթողիկոսը գալու ըլլայ: Տախտ մը, սեղան մը եւ թիկնաթոռ մը պատրաստուած է անոր համար: Երես կը մտնէ, եւ տեւն ունենալով իր անձիւրանի եպիսկոպոսներու արքունիքը: Իր տախտին վրայ կը կենան, անշարժ, երկու կարմիր ու կապոյտ սպասեակ: Բարձրաձայն հայրմեր կը կարգայ, ու կը նստի. մենք ալ կը նստինք. բայց կրօնականները իր թոյլտուութեանը կը սպասեն կոչնականներուն հետ սեղան նստելու համար: Թոյլտուութիւնը կուգայ, եւ հաճութեամբ կը տեսնեմ որ Հ. Տ Լրօնեան գրացիս է:

Սպասը շատ սիրուն է, բանուած արծաթեղէնով, խաղողով լեցուն ոսկի զաշխուրաններով: Կերակուրները, ոչ բազմատեսակ, ընտիր են. գինին, վանքին այգիէն, շատ ախորժելի է, բայց ծարու չ'անցընելու կաթողիկոսը բաժակ կ'առաջարկէ: Ումեղ ձայնով մը, ոտքի վրայ կը խօսի, և մենք կ'ունկնդրենք յոտնկայս: Բաւական յոգնեցուցիչ է ասիկա, թէ՛ իրեն և թէ՛ մեզի համար, մանաւանդ որ ետեւն թարգմանութիւնը կուգայ՝ գեղանձնեայ Սուրբիս սրբազանին բերնով: Պ. Սղանիստա Մեծնիկ կը պատասխանէ սրտեռանդն շեշտով մը: Ուրիշ ճանորդ կը յաջորդեն, յաճախ շատ երկար: Ճաշը ժողովի մը ձեւը առնելու վախ կուտար: Պ. Հիւսիս, Քէմբրիճի նշանաւոր բրոքէսորը, ճշմարտապէս պերճախօս եղաւ: Բայց ինձի թուեցաւ թէ կաթողիկոսը պզտիկ ոխ մը ունէր Անգլիոյ գէմ: Տախտն իջած էր, ու Պ. Հիւսիսի լուրջ խօսքերուն խնդալով պատասխանեց, մկրատով բան մը կտրելու ձեւ մը ընելով: Յետոյ զաշխուրանէ մը խոշոր խաղողներ առաւ և Պ. Հիւսիսի նուիրեց: Թարգմանութիւնը հարցուցի վարդապետին, և ահա. «Երբոր Լանտոն էի, սեղանին վրայ ողկոյզ մը կտրեցին, և ինձի երեք հատ խաղող հրամցուցին: Ու կը մտածէի. «Ո՞վ իմ Հայաստանս, որչափ հեռու ես:» Հիմակ որ նորէն Հայաստան էր, կաթողիկոսը կ'ուզէր իր նուէրներովը ընկճել ամօթահար Անգլիան:

Բաժակաճանորդուն՝ աշակերտներուն հրգերը յաջորդեցին երբոր ճամբայ ինկանք: Գիւղէն անցեր էինք, երբոր պարտկէ մը երիտասարդներ ու մանկամարդ կիներ գլկի մեզ վազեցին ու նուիրեցին ողկոյզներ, իրացնէ զբախտի հաւուղներ: Ազգային պտուղներ որ այդ երիտասարդներն ու կիները մեզի կը բերէին: Երրօրակապտաբազով հագուած էին. հարուստ էին. գեղանի կիւն մը ըսաւ մեզի թէ սովորաբար Բեկրպուրկ կը բնակի: Բայց իրենց վրայ խօսելու համար չէր որ կեանքի այդ բազաւորները մեր քովը կը փութային. «Դուք որ քաղաքակիրթ երկիրներէն կուգաք, ըսին մեզի, Հայաստանին սաածեցէ՛ր, Հայաստան կը չարչարուի կոր:»

Տիկին ՄԴԱՆԻՍԼԱՍ ՄԷՅՆԻԷ

ՅԵՂԱՓՈՒՌԵԱՆ ՄԱԿԱՐՈՅԾՆԵՐԸ

ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԻԶԸ

—Վլայ, հո՞ս ես ինկեր:

Այս բառերով ողջունեցի մեր բարեկամը, Դաշոյն Ատունի, զոր տեսած էի արդէն Աթէնք ու յետոյ Եգիպտոս, երբ նորէն իրեն հանդիպեցայ Մարտէլլ, Քանըպիէրի վրայ:

—Այո՛, երկու ամիս է հոս եմ, պատասխանեց իրեն յատուկ կեղծ լրջութեամբ, բառերուն խորհրդաւոր իմաստ մը տալ ճգնելով: Բաղդը զիս հոս նետեց. նայինք սա անիծեալ Համիտը մեզ զեռօր տեղուանք պիտի պաշտցնէ:

Յետոյ՝ միկէն թեւս մտաւ ու անուշ, փաղաքշտ ձայնով մը, որուն մէջ չեմ գիտեր ինչ պապական բան մը կար.

—Ապսէնթ մը կը խմցնե՞ս կոր, հարցուց:

—Քալէ՛ նայինք, ըսի իրեն այն տիրական այլ միանգամայն ներողամիտ շեշտովը զոր միշտ ունեցած եմ նմանօրինակ պարագաներու մէջ:



Պոլիս ճանչցած էի զինքը առաջին անգամ, երբ Պահճէ-Քաբու, վաշխառուի մը քով, զրազիր էր և կարպիս կը կոչուէր: Զուարճաւոր, թեթեւամիտ, մտացի տղա մըն էր որուն վրայ երբեք հայրենասիրական ախտա նիշներ չէին նշմարած Պոլսոյ մէջ: Օր մը միայն, Հալլէի կղզին, երբ օդի կը խմէր, ցանկարժ ըսաւ.

—Ինչ ազգի կ'ըլլար եթէ հոս Հայու սրճարան մը ըլլար. հոն կ'երթայինք և ոտակնիս փոխանակ Յոյները առնելու Հայը կ'առնէր:

Այդ խօսքերուն ուշադրութիւն չգրաճնցի այն ատեն. յետոյ իմացայ որ կարպիս ժամանակէ մը ի վեր սակաւ է եղեր Դրօշակ կարդալ և յեղափոխականի համբժամը շինել իրեն համար: Նոյն միջոցին Գեսպանները բարենորոգմանց ծրագրովը կը պարապէին և ժողովըրդին մեծ մասը այնպէս կը կարծէր թէ այդ ծրագիրը Հայաստան մը պիտի տար մեզի, թագաւորով, բանակով ու պաշտօնեաներու լէգէնով մը, այնպէս որ Հայերուն մէջ պաշտօնարաշխութիւններ կ'ըլլային արդէն, ամէն մարդուն իր արժանիքին ու կարողութեան համեմատ, բնականաբար առաջնութիւն մը տրուելով յեղափոխականներուն: Կարպիս ուզած էր պատրաստ զըտնուիլ ամէն պատահականութեան հանդէպ և ասոր համար պատշաճ դատած էր յեղափոխական գոյն մը տալ

իր խօսքերուն, ժօրուքին ու գաւազանին: Խօսքերը կալկասեան հօլովումներ առած էին, ժօրուքը սրածայր եղած էր ու գաւազանին կոթը կիսաբոլոր: Իր յոյսերը, որոնք վերջապէս օր մը ինծի յայտնեց, չափազանց յաւակնոտ չէին: Կարծեմ Բաղէշի ապագայ ազգային դրամատան փոխ-անօրէն կամ վանայ լճին ապագայ շոգենաւային ընկերութեան զանձապահ ըլլալ կ'ուզէր: Ազդեցիկ Դաշնակցական մը Կարպիսի անունը նշանակեր էր արդէն տետրակին մէջ եւ գործը մնացեր էր միայն բարենորոգմանց ծրագրին գործադրութեան:

— Ախ, մէյ մը սա ծրագիրը ստորագրէր Սուլթանը, կը հառաչէր Կարպիս այն տենդալից օրերուն մէջ ուր ամբողջ Պոլսոյ Հայութիւնը հարցական նշանի մը փոխուած էր կարծես Ստարապղեցին վրայ դրուած:

— Ստորագրեց...

Ո՛հ, այո՛, ստորագրեց. — այսինքն՝ կուտակալ եղա՞յ, կառավարիչ եղա՞յ, դաշմարձ եղա՞յ, ոստիկանապետ եղա՞յ, դատաւոր եղա՞յ, տէֆտէրտար եղա՞յ, դանձապահ եղա՞յ, քննիչ եղա՞յ, դատախազ եղա՞յ, մէքթուպճի եղա՞յ, բան մը եղա՞յ:

Չէ՛, չստորագրեց, աւա՛ղ, ու օր մը բոլոր այդ յոյսերը երիթացած թափփփեցան Պոլսոյ քարափններուն մօտ կեցած շոգենաներուն մէջ որոնք փոխադրեցին զիրենք Բաղէշէն ու վանէն ու Էրզրումէն շատ հեռու տեղուանք: Կարպիս այդ ընդհանուր փախուածին մէջ զինքը գրտած էր Բաւերիէնիքի շոգենաներէն մէկուն մէջ ու նետուած Բիրէի քարափին վրայ:

Հոն հանդիպեցայ իրեն, առաջին անգամ, Պոլսէն մեկնելու ի վեր:

— Բարեւ, Կարպիս, գոչեցի քոյր մօտենալով:

Դողահար առաջացաւ դէպի ինծի ու ականջս ի վար մըմնջեց պաղատազին ձայնով մը.

— Աման, տունս կ'աւրես կոր, Կարպիս մի կոչեր զիս... Դաշոյն է անունս:

Յետոյ տարաւ զիս Հայերու շրջանակէն հեռու, փաշա Լիմանիի կողմը, առանձին սրճարանի մը անկիւնը, եւ երկու սուրճ ապսպրելէ ետքը, ըսաւ.

— Հիմա ես Պահչէ-Քարու սարափ Պօղոս աղային գրագիրը չեմ... ատանկ մարդ չեմ ճանչնար, աւազակ բուրձուաներու հետ գործ չունիմ, ո՛չ ալ անունս Կարպիս է... Հիմակ, բարեկամ, Դաշնակցական նախկին գործիչ մըն եմ, Դաշոյն Ատունի...

Ու Կարպիս այս վերջին բառերը արտասանեց աչքերը այլանդակօրէն դարձուցած, ձայնին չեմ զիտեր ինչ ուրային հնչունութիւն մը տալով: Վառօղի հոտ մը կարծես տարածուեցաւ սրճարանին մէջ:

— Ես, շարունակեց, պարսկական սահմանադրիւնն ենք մտած եմ, հայդուկախումբներ կազմակերպած եմ, քիւրտեր սպաննած եմ, բանտարկուած ու շղթաներս կոտրելով փախած եմ... Ահա՛ ես ատանկ մարդ մըն եմ հիմա...

— Ինչո՞ւ համար այդ ամենքը, հարցուցի միամիտ

շեշտով մը՝ որուն մէջ սակայն կրցայ քիչ մը հեգնութիւն խառնել:

— Ինչո՞ւ համար... որովհետեւ սարափ Պօղոս աղան խանութը գոցեց եւ ես բացը մնացի ու ա՛լ Պոլիս չէի կրնար ապրիլ: Գացի գտայ մեր Դաշնակցական ներկայացուցիչը, ան որ անունս իր տետրակին մէջ նշանակած էր իբրև անկախ Հայաստանի ապագայ պաշտօնեաներէն մէկը, եւ խնդրեցի որ օգնութիւն մը ընէ ինծի որպէս զի կարենամ Պոլիսէն գուրս գլխիս ճարը նայիլ. — «Շիւթապէս բան մը չեմ կրնար ընել» պատասխանեց, «բայց քեզի նախկին գործիչի լաւ վկայական մը կուտամ, անով կրնաս ապրիլ արտասահմանի մէջ»: Առի վկայականը ու եղայ նախկին գործիչ եմ, կա՛մ հայդուկ, կա՛մ տետր...

— Գոնէ հոս հասնելուդ պէս ըսէիր որ պանքան մտնողներէն ես:

— Մտածեցի ատիկա, բայց դէպքը շատ նոր է... քիչ մը ատեն անցնելէ ետքը ես ալ պիտի մտնեմ պանքան մտնողներուն մէջ... Թէեւ քիչ մը աճապարելու է, որովհետեւ արդէն պանքայի հերոսներուն թիւն ալ քառասունը կ'անցնի կոր: Հիմակուհիմա եօթանասուններէն եմ...

— Ի՛նչ եօթանասուն:

— Չե՛ս գիտեր, եղբայր, սա միւս եօթանասուն հերոսները որոնք մազ մնացեր է միւսներուն հետ պանքան պիտի մտնան եղբր, բայց վայրկեան մը ուշ հասեր ու դոնորը զոցուած գտեր են:

* * *

Կարպիս չկրցաւ Աթէնք ու Բիրէ երկար ատեն շահագործել իր վկայականը եւ մեկնեցաւ Եդիպատոս, ճիշդ այն միջոցին ուր Ալեքսանդրիա կը սպասէին պանքան մտնող երեք վիրաւորեալներուն որոնք՝ ապաքինած ըլլալով՝ ճամբայ պիտի ելլէին Պոլսէն գալու համար:

Մեկնելէն առաջ, Աթէնքէն Կարպիս նամակով կ'իմացնէ թէ վիրաւորեալներէն երկուքը տակաւին Պոլիս պիտի մնան եւ մին միայն, որ Աթէնք հասած է արդէն, իր նամակին հետ շոգենաւ պիտի մանկ դէպի Եդիպատոս:

Այդ նախապատրաստութենէն ետքը, երբոր Կարպիս կուգայ Ալեքսանդրիա, ոչ մէկուն մաքէն կ'անցնի հարցընել իրեն թէ «Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կայցուց»: Եկած վայրկեանէն անվիճելի, անկասկածելի հերոսներէն մէկը կ'ըլլայ: Կուտակցութեան լիազօր ներկայացուցիչը, Պ. Կակաեանց, ցնծութեան մէջ է: Երեսուկայեցեք տօնավաճառի մէջ ցուցանեցներ ի տես դնող մէկը որ վեց ոտքով ու երկու պոչով կով մը ձեռք կը ձգէ: Ա՛լ Կարպիսին թիւն ի վար կախուած կը շրջի ու

կը շրջի Ալեքսանդրիայի փողոցները .

— Բանկայի հերոսներից մին . . կը գոչէ դէմը ելլողին :

Ու այսպէս Կակաբանցի հովանիին տակ, Դաշոյն Ատունի կը ներկայանար բոլոր այն շրջանակներուն մէջ ուր հերոսը կ'ուտէ, կը խմէ, կը պատուուի ու նուէրներ կը ստանայ, քանի մը քաջագործութեանց պատմութեան փոխարէն :

Ալեքսանդրիայի եկեղեցիին բակը հանդիպեցայ իրեն, օր մը, ճիշդ այն միջոցին ուր քսան Ֆէդայիի հետ քերտի գեղ մը արշաւելու վրայ էր: Ականջ ու աչք կտրած տասնի չափ սնկնդիր բրաբրին մը կազմած էին շուրջը: Ինք ներշնչուած, քիչ մըն ալ օղիէն զլուխը տաք, կը պատմէր ու պատմէր անընդհատ .

— . . . Ճիշդ կէս գիշերին ամենքս ալ նետուեցանք ձիերուն վրայ ու Անգոյ ձորին բարձունքէն ինջանք դէպի դաշտ: Ամբողջ ձորն ու դաշտը լեցուած էր թիւրք զինուորներով ու համիտիէներով, որովհետեւ լուր առած էին թէ Ֆէդայիի խումբ մը քրդի գեղերը պիտի կոխէ գիշերը:

Ես կ'երթայի սղոց առջեւէն, մարթինին ձեռքս բռնած, խոշոր գաշոյն մը բերանս ու մէյ մէկ ուկուղէր ձիգմկներուս մէջ, ետեւէս կուգային Կարա Սաղօն ու Շիլ Բաղօն ու յետոյ միւս Ֆէդայիները:

— Տղերք, ըսի, սուղ ծախուի՞նք . . . : Ես կը կարծէի թէ այդ վատ շները պիտի յարձակին մեր վրայ, բայց հազիւ թէ մեր ձիերուն ոտքին ձայնը առին սկսան խնթի պէս փախչիլ « Աման, Ֆէդայիչը կ'կտորլար » պոռալով: Մենք անցանք ձորին մէջէն ու առաջ գացինք դէպի Շէյխ Օսմանին գեղը:

— Տղերք, պատրաստ էք, պոռացի:

— Կեցցէ՛ Ֆէդայիները, գոչեցին ամենքը մէկ բերան, ու յարձակեցանք գեղին վրայ . . . :

* * *

Քանի մը օր ետքը, Կարպիս, Մասիսի սրճարանը Պանքայի յարձակումը կը պատմէր .

— Տղերք, գոչեցի, ուսմբըրը պատրաստ են . . . ան .

Ու այսպէս օրերով՝ « Տղերք գոչեցի » ներու շնորհիւ Կարպիս պարարեց իր փորն ու զրպանը, մինչեւ որ երեք հարազատ հերոսները եկան Պոլսէն ու ինք ստիպուեցաւ թողուլ Եղիպտոսը:

Բայց ա՛լ կատարեղապէս նախկին գործիչ մը եղած էր: Իր պատմութիւնները, հետզհետէ « սրբազրեալ ու յաւելեալ », վաւերականութեան զրոշմը առած էին: Պատմած ատենը չունէր առաջին օրերու դեղեւումը, և խորին համոզումով կը խօսէր իր անցեալ գործունէութեան վրայ:

Այսպէս տեսայ զինքը երբ վերջին անգամ իրեն հանդիպեցայ Քանրպիէի վրայ:

Սակայն, աւա՛ղ, Մարսէլ այն ամուլ հոգերէն է ուր յեղափոխութեան մակաբոյժները չեն կրնար ուռճանալ:

Կարպիսի « Տղերք գոչեցի » ն չէր թրթոացներ հայ վաճառականներու սրտին թելերը:

— Ժընէվ չեթթա՞ս, ըսի իրեն երբ վիճակին զառնութիւնը պարզեց ինձի:

— Ի՛նչ ընելու, գոչեց նախկին գործիչը, հերոսութիւն պատմելու. ես մէկ նետեմ նէ՛ անոնք տասը կը ջարդեն:

— Բայց անշուշտ իբր ընկեր նիւթական օգնութիւն մը չեն զլանար:

— Չէ՛, եղբայր, մեր մէջը ապակեղրոնացում կայ . . . ամէն տեղի դրամը այն տեղի մարդոց համար է. անոնք միայն կրնան և իրաւունք ունին . . .

Գլխով հարցական շարժում մը ըրի:

— . . . Մատակարարելու, հառաչեց Կարպիս:

Վիէննա

ԵՐՕՏ

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԻՐԱՏԷՆ. Նոյեմբեր 14ի թիւովը Պոլսէն զարևոտած հետեւեալ հետազոտք հրատարակեց. « Հայոց պատրիարքը դասնապիս կը գանգատի Սուրանիէն իրատեւ գաշաւները անգործադրելի կը մնայ: »

ԹԻԻՐԲԻՍ. Թրանսվաայի պատերազմը Սուրանիէն քռելը կը խոտովէ: Միջազգային քաղաքականութեան մէջ Ռիմնական փոփոխութիւններ կը գոչակոչին այդ պատերազմին ելքէն, ոչ Սուրանը գիտէ թէ այդ քաղաքականութեան մէջ ամէն փոփոխութիւն կրնայ դասնալ դասնալ ոչ իր գլխուն պայրիլ: Ուստի վերջերս պաշտօնը գոչեարեք է բոլոր նախարարները, և անոնց խորհուրդը հարցոցեր է այս մասին: Ժողովը, ընկանարար, աշարտեր է առանց ու կ որոշման մը գաշու:

ՀԱՍՅԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 1 ճին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար: